

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» «-----» 2022թ.

N ----- - Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 71-րդ, 72-րդ, 73-րդ, 74-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 105,103,316.6 հազ. դրամ,

բ) ծախսերի գծով՝ 105,535,919.3 հազ. դրամ,

գ) դեֆիցիտը (պակասուրդը) 432,602.7 հազ. դրամ:

2) Երևանի 2023 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Երևանի 2023 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4) Երևանի 2023 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N3 հավելվածի.

5) Երևանի 2023 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N4 հավելվածի.

6) Երևանի 2023 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 5 հավելվածի.

7) Երևանի 2023 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 6 հավելվածի.

8) Որոշման N 6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի ճանապարհային շինարարություն, համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրերի իրականացման համար հատկացնել 2,672,754.4 հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված.

1) առողջության ապահովագրության ծրագրով նախատեսված ծառայությունների ցանկը, շահառուների որոշման չափորոշիչները և իրականացման կարգը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

2022թ. _____ « »
Երևան

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԵԿՎԱՈՒՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՐՅՈՒՐՆԵՐԻ (հազար դրամներով)

Տնդի NIN	Եկամտատեսակները	Գրովածի NIN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿՎԱՈՒՏՆԵՐ		105,103,316.6	103,972,209.9	9,294,370.5
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150) , այդ թվում՝	7100	28,207,383.2	28,207,383.2	-
	այդ թվում՝				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝	7131	11,733,130.8	11,733,130.8	-
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		986,851.2	986,851.2	-
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		214,773.4	214,773.4	-
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		10,531,506.2	10,531,506.2	-
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	12,749,719.9	12,749,719.9	-
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		12,749,719.9	12,749,719.9	-
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝	7145	3,224,532.5	3,224,532.5	-
	այդ թվում՝				
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		269,700.0	269,700.0	-
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար		55,821.0	55,821.0	-
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		16,220.0	16,220.0	-
11304	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողմերում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար		187,204.6	187,204.6	-

Տողի NN	Եկամտատեսակները	Գողվածի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		48,016.3	48,016.3	-
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար		48,100.0	48,100.0	-
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար		531,770.5	531,770.5	-
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար		146,205.8	146,205.8	-
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		153,454.3	153,454.3	-
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		216,410.0	216,410.0	-
11312	Ավագանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ-րի (բացառ. Երևան քաղաքի)		1,434,000.0	1,434,000.0	-
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար		77,400.0	77,400.0	-
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		80.0	80.0	-
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար		34,500.0	34,500.0	-
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		3,000.0	3,000.0	-
11319	Այլ տեղական տուրքեր		2,650.0	2,650.0	-
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	7146	500,000.0	500,000.0	-
	այդ թվում՝				

Տողի NN	Եկամտատեսակները	Գողմանի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		100,000.0	100,000.0	-
1142	Նոտարարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթ. պատճեն. հանելու և դրանցից քաղվածք. տալու համար		400,000.0	400,000.0	-
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	22,520,099.3	21,403,992.6	1,116,106.7
	այդ թվում՝				
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7321	1,375,500.0	1,375,500.0	-
	այդ թվում՝				
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		1,375,500.0	1,375,500.0	-
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7322	389,405.4	-	389,405.4
	այդ թվում՝				
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		389,405.4	-	389,405.4
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) , որից՝	7331	20,028,492.6	20,028,492.6	-
	այդ թվում՝				
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		13,430,355.1	13,430,355.1	-
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		6,598,137.5	6,598,137.5	-
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	726,701.3	-	726,701.3
	այդ թվում՝				
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		726,701.3	-	726,701.3
1300	3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	54,375,834.1	54,360,834.1	8,178,263.8
	այդ թվում՝				

Տողի NN	Եկամտատեսակները	Գողվածի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	93,727.3	93,727.3	-
	այդ թվում՝				
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		93,727.3	93,727.3	-
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝	7415	1,848,408.5	1,848,408.5	-
	այդ թվում՝				
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1,347,933.8	1,347,933.8	-
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		176,566.3	176,566.3	-
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		323,908.4	323,908.4	-
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝	7421	43,783,278.5	43,783,278.5	-
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		43,783,278.5	43,783,278.5	-
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	7422	7,342,149.8	7,342,149.8	-
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տ , այդ թվում՝		6,352,149.8	6,352,149.8	-
	այդ թվում՝				
13502	Ճարտար. նախագծ. փաստաթղթ-ով նախ. շինար. թույլտվ. պահանջ., բոլոր շինարար. աշխատանք-ն իրական. հետո շենք-ի և շինութ-երի (այդ թվում՝ դրանց վերակառ-ը, վերականգն-ը, ուժեղ-ը, արդիակ-ը, ընդլայն-ն ու բարեկարգ-ը) կառուց. ավարտը ավարտ. ակտով փաստագր. ձևակերպ. համար		101,000.0	101,000.0	-
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար		50,000.0	50,000.0	-
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար		2,000.0	2,000.0	-
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		2,000.0	2,000.0	-

Տողի NN	Եկամտատեսակները	Գողվածի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար		4,128,507.3	4,128,507.3	-
13508	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար		2,000.0	2,000.0	-
13513	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար		43,200.0	43,200.0	-
13514	Համայնքային ենթակայության արտադրարկային հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար		650,321.5	650,321.5	-
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար		15,000.0	15,000.0	-
13517	Համայնք. սեփ. հանդ-ող ընդհանուր օգտագործ. փողոց-ում և հրապարակ-ում (բաց. բակային տարածք-ի, ուսումն., կրթ., մշակութ. և առողջ. հաստատ-երի, պետ. կառավարման և տեղ. ինքնակառ. մարմին-ի վարչ. շենք-ի հարակից տարածք-ի) ավտոտր. միջոցն ավտոկայանատ. կայանելու համար		1,210,000.0	1,210,000.0	-
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար		2,121.0	2,121.0	-
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց		1,000.0	1,000.0	-
13520	Այլ տեղական վճարներ		145,000.0	145,000.0	-
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		990,000.0	990,000.0	-
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) այդ թվում՝	7431	577,700.0	577,700.0	-
	այդ թվում՝				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		572,700.0	572,700.0	-
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից		5,000.0	5,000.0	-
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372), այդ թվում՝	7441	4,550.0	4,550.0	-
	այդ թվում՝				
1372	Ֆիզ. անձ. և կազմակերպ. նվիրաբեր. համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմն. տնօրինմանն անցած գույքի (հիմն.միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.) իրացումից և դրամական միջոցներից ընթ. ծախսերի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտքեր՝ տրամադր. ներքին աղբ.		4,550.0	4,550.0	-

Տողի NN	Եկամտատեսակները	Գողկածի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝	7451	726,020.0	711,020.0	8,178,263.8
	այդ թվում՝				
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		15,000.0	-	15,000.0
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	8,163,263.8
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		711,020.0	711,020.0	-

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՐԶԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ` ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ
 ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
 (հազար դրամներով)

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում`	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	105,535,919.3	103,972,209.9	9,726,973.2
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12,498,608.4	10,392,997.7	2,105,610.7
				այդ թվում`			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	10,579,213.0	10,224,112.3	355,100.7
				որից`			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	10,565,213.0	10,210,112.3	355,100.7
2113	01	1	3	Արտաքին հարաբերություններ	14,000.0	14,000.0	-
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ	33,983.0	33,983.0	-
				որից`			
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ զծով ընդհանուր բնույթի ծառայություններ	33,983.0	33,983.0	-
2150	01	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների զծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,755,510.0	5,000.0	1,750,510.0
				որից`			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների զծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,755,510.0	5,000.0	1,750,510.0
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	129,902.4	129,902.4	-
				որից`			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	129,902.4	129,902.4	-
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	144,932.0	34,932.0	110,000.0
				այդ թվում`			
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն	122,502.0	12,502.0	110,000.0
				որից`			
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	122,502.0	12,502.0	110,000.0
2250	02	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	22,430.0	22,430.0	-
				որից`			

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	22,430.0	22,430.0	-
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27,584,316.9	28,187,361.2	(603,044.3)
				այդ թվում՝			
2410	04	1	0	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	30,000.0	30,000.0	-
				որից՝			
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	30,000.0	30,000.0	-
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	189,858.0	-	189,858.0
				որից՝			
2424	04	2	4	Ոռոգում	189,858.0	-	189,858.0
2430	04	3	0	Վառելիք և էներգետիկա	4,962,233.4	2,876,989.8	2,085,243.6
				որից՝			
2435	04	3	5	Էլեկտրաէներգիա	4,962,233.4	2,876,989.8	2,085,243.6
2450	04	5	0	Տրանսպորտ	25,755,210.4	23,419,349.7	2,335,860.7
				որից՝			
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	21,339,907.6	20,079,075.0	1,260,832.6
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	4,415,302.8	3,340,274.7	1,075,028.1
2470	04	7	0	Այլ բնագավառներ	43,500.0	10,500.0	33,000.0
				որից՝			
2473	04	7	3	Զբոսաշրջություն	43,500.0	10,500.0	33,000.0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(3,396,484.9)	1,850,521.7	(5,247,006.6)
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(3,396,484.9)	1,850,521.7	(5,247,006.6)
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10,799,894.8	10,256,618.5	543,276.3
				այդ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	5,037,246.1	5,029,871.1	7,375.0
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	5,037,246.1	5,029,871.1	7,375.0
2520	05	2	0	Կեղտաջրերի հեռացում	213,000.0	13,000.0	200,000.0
				որից՝			
2521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	213,000.0	13,000.0	200,000.0
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	53,130.0	53,130.0	-
				որից՝			

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2531	05	3	1	Օդի աղտոտման դեմ պայքար	53,130.0	53,130.0	-
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5,496,518.7	5,160,617.4	335,901.3
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5,496,518.7	5,160,617.4	335,901.3
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7,556,027.2	3,603,860.7	3,952,166.5
				այդ թվում՝			
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	538,564.0	38,564.0	500,000.0
				որից՝			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	538,564.0	38,564.0	500,000.0
2630	06	3	0	Ջրամատակարարում	10,200.0	-	10,200.0
				որից՝			
2631	06	3	1	Ջրամատակարարում	10,200.0	-	10,200.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	1,905,659.4	1,769,679.0	135,980.4
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	1,905,659.4	1,769,679.0	135,980.4
2650	06	5	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	7,000.0	-	7,000.0
				որից՝			
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	7,000.0	-	7,000.0
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5,094,603.8	1,795,617.7	3,298,986.1
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5,094,603.8	1,795,617.7	3,298,986.1
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ	578,662.0	101,300.0	477,362.0
				այդ թվում՝			
2710	07	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	79,000.0	-	79,000.0
				որից՝			
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	79,000.0	-	79,000.0
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	499,662.0	101,300.0	398,362.0
				որից՝			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	499,662.0	101,300.0	398,362.0

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2800	08	0	0	ՀԱՆՔԻՍ, ՄՆԱԿՈՒՅՑ ԵՎ ԿՐՈՆ	4,831,286.6	3,886,144.6	945,142.0
				այդ թվում՝			
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ	824,614.4	234,862.4	589,752.0
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	824,614.4	234,862.4	589,752.0
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	3,989,156.2	3,633,766.2	355,390.0
				որից՝			
2821	08	2	1	Գրադարաններ	709,661.9	669,661.9	40,000.0
2822	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	324,809.0	324,809.0	-
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	539,186.8	539,186.8	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	1,494,809.3	1,469,809.3	25,000.0
2825	08	2	5	Արվեստ	900,689.2	610,299.2	290,390.0
2827	08	2	7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	20,000.0	20,000.0	-
2840	08	4	0	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	17,516.0	17,516.0	-
				որից՝			
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	17,516.0	17,516.0	-
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	36,694,663.1	34,698,533.1	1,996,130.0
				այդ թվում՝			
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	19,937,599.6	19,787,599.6	150,000.0
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	11,733,384.9	11,583,384.9	150,000.0
2912	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	8,204,214.7	8,204,214.7	-
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	9,699,728.0	9,699,728.0	-
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	9,448,623.2	9,448,623.2	-
2922	09	2	2	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	251,104.8	251,104.8	-
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	5,160,381.5	4,982,081.5	178,300.0
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	5,160,381.5	4,982,081.5	178,300.0
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,896,954.0	229,124.0	1,667,830.0
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,896,954.0	229,124.0	1,667,830.0

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,974,773.9	1,874,443.9	100,330.0
				այդ թվում՝			
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք	15,099.9	15,099.9	-
				որից՝			
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք	15,099.9	15,099.9	-
3040	10	4	0	Ընտանիքի անդամներ և զավակներ	4,500.0	4,500.0	-
				որից՝			
3041	10	4	1	Ընտանիքի անդամներ և զավակներ	4,500.0	4,500.0	-
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	492,662.0	392,332.0	100,330.0
				որից՝			
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	492,662.0	392,332.0	100,330.0
3090	10	9	0	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,462,512.0	1,462,512.0	-
				որից՝			
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,462,512.0	1,462,512.0	-
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	2,872,754.4	10,936,018.2	100,000.0
				այդ թվում՝			
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	2,872,754.4	10,936,018.2	100,000.0
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	2,872,754.4	10,936,018.2	100,000.0



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐԶ



ՄԱՍ I

Երևանի քաղաքապետի զեկույցը 2023 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա և Երևան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2023 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2022 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2023 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Քաղաքի կառավարման ներառականության բարելավումը:

6. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
7. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
8. Կենցաղային թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծմանը:
9. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման շարունակական ապահովումը:
10. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդումը:
11. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացումն ու գործունեության թափանցիկության ապահովումը:
12. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
13. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Երևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
14. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծումը:
15. Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը:
16. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
17. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
18. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
19. Երևան քաղաքում էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի ապահովումը:
20. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:
21. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական ծրագրերի շարունակականության ապահովումը:
22. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա

անցկացումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:

23. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:

24. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:

25. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, Երևանի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանումը:

26. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման մեկնարկի ապահովումը:

27. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:

28. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:

29. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

30. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուրների գծով՝ 105,103,316.6 հազ. դրամ,

ծախսերի գծով՝ 105,535,919.3 հազ. դրամ,


դեֆիցիտը՝ 432,602.7 հազ. դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 105,103,316.6 հազ. դրամ: Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեն ի սկզբանե հաստատվել է 94,560,201.2 հազ. դրամ, ճշտված բյուջեն 91,368,343.9 հազ. դրամ, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 81,729,646.4 հազ. դրամ: Նախատեսված եկամուտները գերազանցում են 2022 թվականի հաստատված նույն ցուցանիշը 10,543,115.3 հազ. դրամով կամ 11.2%-ով, իսկ ճշտված ցուցանիշը 13,734,972.7 հազ. դրամով կամ 15.0%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 38,799,938.7 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսվածից 4,261,307.7 հազ. դրամով կամ 12.3%-ով ավելի, իսկ 2021 թվականի փաստացի սեփական եկամուտներից՝ 8,188,587.9 հազ. դրամով կամ շուրջ 27%-ով ավելի: Ըստ էության կարելի է արձանագրել, որ Երևան քաղաքի սեփական եկամուտների աճի դինամիկան պահպանվում է, մասնավորապես 2019 թվականից ի վեր նշված ցուցանիշը աճել է շուրջ 14,859,063.0 հազ. դրամով կամ 62.0%-ով: Ստորև գրաֆիկական հ. 1 պատկերով

ներկայացվում է Երևան քաղաքի սեփական եկամուտների աճման դինամիկան սկսած 2019 թվականից:



(պատկեր 1)

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 24,482,850.6 հազ. դրամի չափով կամ 2022 թվականի համար հաստատված ցուցանիշից 2,747,359.2 հազ. դրամով կամ 12.6%-ով ավել, ընդ որում ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառման արդյունքում հարկային եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է անշարժ գույքի մասով եկամտատեսակից, որից.

- Անշարժ գույքից գույքային հարկերը նախագծով նախատեսվել է 11,733,130.7 հազ. դրամ կամ 2022 թվականի համար հաստատված ցուցանիշից 2,442,489.6 հազ. դրամով ավելի, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշից 4,566,146.2 հազ. դրամով կամ շուրջ 63.7%-ով ավելի:
- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 12,749,719.9 հազ. դրամ, 2022 թվականի բյուջեով հաստատված 12,444,850.3

հազ. դրամի դիմաց կամ 304,869.6 հազ. դրամով ավել, ինչը ավել է 2021 թվականի փաստացի հավաքագրված գումարից 2,466,229.4 հազ. դրամով կամ շուրջ 24 %-ով:

Տեղական տուրքերի գծով 2023 թվականին ծրագրվել են 3,224,532.5 հազ. դրամի մուտքեր, 2022 թվականին նախատեսված 3,152,541.3 հազ. դրամի դիմաց կամ 71,991.2 հազ. դրամով ավել, ինչը պակաս է 2021 թվականի փաստացի ցուցանիշից 154,275.5 հազ. դրամով կամ շուրջ 4.5%-ով, մասնավորապես որոշակի ավելացումը այս մասով պայմանավորված է մի քանի տեղական տուրքերի նախատեսվող հավաքագրումների փոփոխությամբ՝ այդ թվում նաև նվազմամբ, ընդ որում ավելացումը մեծամասամբ պայմանավորված է համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու, համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի, համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվությունների համար վճարվող տուրքերի ավելացմամբ:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2023 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվել է 1,434,000 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված 1,444,500.0 հազ. դրամից 10,500.0 հազ. դրամով կամ 0.7%-ով պակաս:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2023 թվականի համար նախագծով ծրագրվել են 500,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 40,000.0 հազ. դրամով ավել, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 100,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 400,000.0 հազ. դրամ:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 22,520,099.2 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2022 թվականի հաստատված բյուջեից 70,454.10 հազ. դրամով կամ 0.3%-ով ավել: Ընդ որում.

- Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 1,375,500.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 80,404.7 հազ. դրամով կամ 6.2%-ով ավել, որը ներառում է Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերի շուրջ ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 389,405.4 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 323,544.7 հազ. դրամով կամ 45.4%-ով պակաս, որը նախատեսում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 13,430,355.1 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված և 2021 թվականի փաստացի ստացված ցուցանիշների չափով:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 6,598,137.5 հազ. դրամ՝ 2022 թվականի ի սկզբանե հաստատվածից 1,892.8 հազ. դրամով ավել, որը պայմանավորված է որոշ կազմակերպությունների պահպանման ծախսերում նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ իսկ ճշտված ցուցանիշից 96,942.2 հազ. դրամով պակաս: (ցանկը կցվում է):
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսվել են 726,701.3 հազ.

դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 311.701.3 հազ. դրամով կամ 75.1%-ով ավել:

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2023 թվականի նախագծով ծրագրվել են 54,375,834.1 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 44,431,811.3 հազ. դրամի դիմաց, ինչը ավելացում է 2022 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 7,613,310.8 հազ. դրամով կամ 16.3%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2023 թվականին ծրագրվել է 93,727.3 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված ցուցանիշից 12,255.3 հազ. դրամով կամ 15.0%-ով ավել: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 1,347,933.8 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված 1,085,067.1 հազ. դրամի դիմաց կամ 262,866.7 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումը, մասնավորապես հաշվարկը շուկայական արժեքի մոտարկված կադաստրային արժեքով, ներառյալ ավագանու որոշմամբ սահմանված կարգով և դրույքաչափերով վարձակալության պայմանագրերի վերանայման հնարավորությունները,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 176,566.3 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 18,892.7 հազ. դրամով կամ 12%-ով ավել,
- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 323,908.4 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսված 321,236.5 հազ. դրամի դիմաց,

- պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև Երևանի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման, Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման, Երևանի քաղաքային լուսավորության քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2023 թվականի համար ծրագրվել են 43,783,278.5 հազ. դրամ՝ 2022 թվականին հաստատված 37,571,925.0 հազ. դրամի դիմաց՝ 6,211,353.5 հազ. դրամով կամ 16.5%-ով ավել, հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է):
- տեղական վճարների գծով ծրագրվել է 6,352,149.8 հազ. դրամ՝ 2022 թվականի 6,009,429.1 հազ. դրամի համեմատ՝ 342,720.7 հազ. դրամով կամ 5.7%-ով ավել: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 4,128,507.3 հազ. դրամի չափով 2022 թվականի նույն ցուցանիշից 387,511.0 հազ. դրամով կամ 10.4%-ով ավել, ինչպես նաև համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 2000.0 հազ. դրամ, համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ավարտը ավարտական

ակտով փաստագրման ձևակերպման համար և շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 151,000.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 2,000.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցները ավտոկայատեղում կայանելու համար ծրագրվել է 1,210,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 43,200.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 650,321.5 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 15,000.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 2,121.0 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 1,000.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 2,000.0 հազ. դրամ, այլ տեղական վճարների համար՝ 145.000.0 հազ. դրամ:


- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճարների գծով ծրագրվել է 990,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականին ծրագրված ցուցանիշից 790,000.0 հազ. դրամով ավել չափով՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշը:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 572,700.0 հազ. դրամ՝ այդ թվում ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում

նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից մուտքերը, նախորդ տարվա 575,700.0 հազ. դրամի դիմաց,

- մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից եկամտի գծով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ:
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 711,020.0 հազ. դրամ՝ 2022 թվականի բյուջեով նախատեսված 728,020.0 հազ. դրամի դիմաց:
- նախատեսվում է նաև 8,163,263.8 հազ. դրամի չափով վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:


Ամփոփելով Երևան քաղաքի 2023 թվական բյուջեի նախագծով առաջարկվող եկամտային մասը՝ ներկայացվում է 2023 թվականի ընդամենը եկամուտների վերլուծությունը՝ հ.2 պատկերով՝ ըստ առանձին խմբերի տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, և միաժամանակ սեփական եկամուտների բացվածքը տեսակարար կշռի վերձանման սկզբունքով՝ հ.3 պատկերով :

Երևան քաղաքի 2023թ. բյուջեի ընդամենը եկամուտների տեսակարար



(պատկեր 2)

Երևան քաղաքի 2023թ. բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը



(պատկեր 3)

2. Ծախսերի կանխատեսում.


Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 105,535,919,3 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 98.5%-ը կամ 103,972,209.9 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 14,988,979.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի գումարը կազմում է 5,262,006.6 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2022 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 6,714,696.4 հազ. դրամով, իսկ 2022թ ճշտված բյուջեի նկատմամբ պակաս է 10,176,990.3, որը հիմնականում պայմանավորված է 2022 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի ավելացմամբ: 2021 թվականի փաստացի բյուջեի նկատմամբ 2023 թվականի ծախսերը ավելացել են 28,182,640.5 հազ. դրամով:

Երևան համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծով խոշոր կապիտալ ելքերից են հանդիսանում Երևան քաղաքի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի

բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (պատկեր 4 և 5):

(հազ. դրամ)


Բակային տարածքների և խաղահրապարակների նորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման գծով ծախսերը



(պատկեր 4)


Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման ծախսերը, այդ թվում՝ վարկադրամաշնորհային միջոցներով

(հազ. դրամ)




(պատկեր 5)

Որոշ ծրագրեր 5-ամյա կտրվածքով պահպանել են իրենց դրական դինամիկան, մասնավորապես դրանցից կարելի է առանձնացնել «Շենքերի գեղարվեստական լուսավորում», «Եզրաքարերի վերանորոգում», «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում», «Վթարային պատշգամբների նորոգում», որոնց մասով կից ներկայացվում է համեմատական վերլուծություն՝ հ. 6-9 պատկերներով:




(պատկեր 6)
(հազ. դրամ)

Եզրաքարերի վերանորոգում



Քանգաթի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում


(հազ. դրամ)



(պատկեր 8)

Վթարային պատշգամբների նորոգում

(հազ. դրամ)




(պատկեր 9)

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 37.2%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 24.4%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 10.2%:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծի՝ բյուջետային գործառնական դասակարգման տեսակարար կշիռը՝ ընդամենը ծախսերի կազմում (պատկեր 10):

Երևան քաղաքի 2023թ. բյուջեի գործառնական դասակարգում



- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
- Սնտեսական հարաբերություններ
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
- Հանգիստ, մշակույթ և կրոն
- Սոցիալական պաշտպանություն
- Պաշտպանություն
- Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Առողջապահություն
- Կրթություն
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

(պատկեր 10)

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 11,036,018.2 հազ. դրամի չափով, որից 10,936,018.2 հազ. դրամը վարչական մասը (վարչական եկամուտների 10.5%-ը), իսկ 100,000.0 հազ. դրամը ֆոնդային մասը, իսկ հատկացումը պահուստային ֆոնդի վարչական մասից՝ ֆոնդային բյուջե, կազմում է 8,163,263.8 հազ. դրամ: Վարչական մասի պահուստային ֆոնդից 2,672,754.4 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն

զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի կատարմանը՝ այդ թվում նաև համակարգմանն ու կառավարմանը:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով՝ ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված նվազագույն սահմանաչափի պահպանման նպատակով:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 10,333,900.1 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 9.8%-ը, ինչը 2022 թվականի հաստատված համապատասխան ցուցանիշից ավել է 106909.3 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում **աշխատավարձի ֆոնդը**՝ 7,837,870.1 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է բյուջետայի գործընթացի շրջանակներում՝ այդ պահին ինկորպորացված Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 1980.5 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1963.5 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների): Ընդ որում 2022 թվականի ընթացիկ բյուջետային տարում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, այդ թվում վարչական շրջանների աշխատակազմերի հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմել է 1966.0: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է

հավելվածներ, արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: 2022 թվականի ճշտված՝ 138,380.8 հազ. դրամի դիմաց՝ **պարզևարման ֆոնդը** նախատեսվել է 61,619.2 հազ. դրամով ավել, կազմելով՝ 200,000.0 հազ. դրամ: **Էներգետիկ ծառայությունները** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2023 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, ինչպես նաև ներկայումս գործող հանրային ծառայությունների սակագները: Մասնավորապես, այս հոդվածով 2023 թվականին նախատեսվել է 294,783.8 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 24,300.5 հազար դրամով ավել: **Կոմունալ ծառայությունները** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 21,707.8 հազ. դրամի չափով՝ 2022 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 3,051.4 հազ. դրամով ավել, հաշվի առնելով ներկայումս գործող սակագները: **Կապի ծառայությունները** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 217,095.7 հազ. դրամ, ինչը պակաս է 2022 թվականի ճշտված ցուցանիշից 15,626.6 հազ. դրամով: **Ապահովագրական ծախսերը** նախատեսվել են 58,000.9 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը, ինչպես նաև քաղաքապետարանի կողմից ձեռք բերվող ավտոբուսների և տրոլեյբուսների հետ կապված ապահովագրական ծախսերը: **Գույքի և սարքավորումների վարձակալությունը** ծրագրվել է 48,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված ցուցանիշից 9,835.0 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը, իսկ ավելացումը պայմանավորված է ծառայությունների մատուցման գնագոյացման հետ, մասնավորապես՝ վառելիքի թանկացման հետ: **Ներքին գործուղումների գծով** ծախսերի համար նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ, 2022 թվականին հաստատված ցուցանիշից

16,150.0 հազ. դրամով պակաս, որով նախատեսվում է իրականացնել ներհանրապետական գործուղումներ, իսկ **Արդասահմանյան գործուղումների** գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի ծախսերը, 2023 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 13,000.0 հազ. դրամով պակաս, հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: **Վարչական ծառայությունների** գծով նախատեսվել է 12,705.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև թարգմանչական ծառայությունների համար՝ 2022 թվականին նախատեսված 12,620.0 հազ. դրամի դիմաց: **Համակարգչային ծառայությունների** գծով ծրագրվել է 52,670.8 հազ. դրամ՝ քաղաքապետարանի տեղական տուրքերի, և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի, գանձապետական և բյուջեի նախագծման ու կառավարման համակարգչային առկա ծրագրերի, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների <<Ծ-Ձեռնարկություն> համակարգի, ինչպես նաև Mulberry համակարգի սպասարկման համար: **Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների** համար նախատեսվել է 41,000 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման և նեղ մասնագիտական և կոմպետենցիաների վերապատրաստման համար աշխատակիցների մասնակցելու գործընթացը ապահովելու համար, որը 2022 թվականի հաստատված ցուցանիշից պակաս է 26,700.1 հազ. դրամով: **Տեղեկատվական ծառայությունների** գծով ծախսերը նախատեսվել են 16,334.0 հազ. դրամի չափով՝ 2022 թվականին հաստատված ցուցանիշից 6,540.8 հազ. դրամով պակաս՝ բրոշյուրների, տպագրության, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայության, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման նպատակով: **Կառավարչական ծառայությունների** գծով ծախսերը նախատեսվել են 64,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 44,000.0 հազ. դրամով ավել, ինչը

պայմանավորված է Երևանի քաղաքապետարան կառավարչական հիմնարկի գույքագրման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությամբ: Ծախսերը ներառում են նաև աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար, ինչպես նաև փորձագետի ներգրավման ծառայությունները: **Ներկայացուցչական ծախսերի** գծով ծրագրվել է 69,145.5 հազ. դրամ, ինչը պակաս է 2022 թվականի հաստատված ցուցանիշից 586.5 հազ. դրամով: **Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները** ծրագրվել են 65,883.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, վերապատրաստման մոդուլների մշակման և տեղեկատվական գրքույկների կազման ծառայությունները, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների համար Ամանորին կազմակերպվող միջոցառումների իրականացումը: **Մասնագիտական ծառայությունների** գծով նախատեսվել է 14,916.9 հազ. դրամի չափով ծախս՝ փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության, վարչական շենքերում վերելակների փորձաքննության տրամադրման համար և ծրագրվել է 2022 թվականի հաստատված բյուջեից 16,672.0 հազ. դրամով պակաս: **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման** գծով ծրագրվել է 271,892.5 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 50,394.1 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել է քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված և շահագործվող գույքի, այդ թվում ավտոմեքենաների քանակական և որակական ցուցանիշները, ընդ որում սույն հոդվածի թվային ավելացումը մեծամասամբ պայմանավորված է մեքենաների մաշվածության բարձր մակարդակի հետ: **Գրասենյակային նյութեր և հագուստ** հոդվածով ծախսերը ծրագրվել են 64,387.4 հազ. դրամ, ինչը պակաս է 2022 թվականի հաստատված բյուջեից 7,236.1 հազ. դրամով, ինչը պայմանավորված է Mulberry համակարգի ներդրմամբ, որի արդյունքում կրճատվել է թղթի ձեռքբերման վրա կատարվող ծախսերը և հաշվարկվել են հաշվի առնելով

գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: **Տրանսպորտային նյութերը** ծրագրվել են 218,380.0 հազ. դրամի չափով 2022 թվականի հաստատված ցուցանիշից 19,206.0 հազ. դրամով ավել, որը հիմնականում պայմանավորված ավտոմեքենաների վառելիքի թանկացման հետ: Հաշվարկը իրականացվել է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: **Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ** գծով նախատեսվել է 30793.2 հազար դրամ՝ 2022 թվականի 27,541.1 հազ. դրամի դիմաց, ավելացումը հիմնականում պայմանավորված է գնաճով և նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: **Հարուկ նպատակային այլ նյութերի** գծով ծրագրվել է 16,640.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա հաստատված 51,110.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների, հուշամեդալների և կրծքանշանների ձեռք բերում, իսկ նվազեցումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարիներին ձեռքբերվող՝ կորոնավիրուսային հիվանդության պայմաններում կանխարգելիչ միջոցառումների իրականացման շրջանակներում՝ դիմակների, ձեռնոցների և ախտահանիչ նյութերի հետ: **Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին** հոդվածով ծրագրվել է 297,206.4 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները՝ 2022 թվականի ցուցանիշից 12,187.8 հազ. դրամով ավել: **Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին** հոդվածով ծրագրվել է 28,400.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի թվով 4 ավտոբուսների սպասարկման համար, որոնք իրականացնելու են աշխատակազմի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին՝ առավոտյան և երեկոյան ժամերին, սահմանված 4 ուղղություններով: **Այլ նպաստներ բյուջեից** հոդվածով նախատեսվել է 58,500.0 հազ. դրամ՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին, որը նախորդ տարվա համեմատ ավել է 5,230.0 հազ. դրամով, ինչն էլ պայմանավորված է 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի ավելացմամբ: **Պարտադիր**

վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 10,629.7 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեից 1,474.7 հազ. դրամով ավել, ինչը պայմանավորված է նոր ձեռք բերվող ավտոբուսների և տրոլեյբուսների հաշվառման և գրանցման համար անհրաժեշտ տուրքերի վճարման անհրաժեշտությամբ: **Այլ ծախսեր** հողվածով ծրագրվել է 81,000.0 հազ. դրամ՝ 2023 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի համար: **Վարչական սարքավորումների** գծով ծրագրվել է 173,857.8 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեից 5,326.0 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա, որոնք արդեն պիտանի չեն օգտագործման և ենթակա են դուրս գրման: **Այլ մեքենաներ և սարքավորումների** գծով նախատեսվել է 630.0 հազ. դրամ, որով նախատեսվում է Կենտրոն վարչական շրջանի վարչական շենքի համար ձեռք բերել հակահրդեհային համակարգ, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի համար տեխնիկական գործիքների ձեռքբերման նպատակով: **Ոչ նյութական հիմնական միջոցների** մասով 2023 թվականին նախատեսվում է ձեռք բերել հողերի վարձակալության պայմանագրերի հաշվառման նոր համակարգչային ծրագիր, ինչպես նաև համայնքային ծառայողների համար մրցութային և ատեստավորման ծրագիր:

1. **Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 231,312.9 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 584,324.5.0 հազ. դրամի դիմաց կամ 60.41%-ով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում 35,000.0 հազ. դրամ նախատեսվում է իրականացնել Բուզանդ 1/3 վարչական շենքի սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև նախատեսվում է Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների վարչական շենքերի մասնակի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, իսկ Նուբարաշեն վարչական շրջանում վարչական շենքի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելու համար նախատեսվում է՝ 78,612.9 հազ. դրամ:

2. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանիշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2023 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն: Ներկայումս Fitch միջազգային վարկանիշային գործակալության կողմից Երևան քաղաքին շնորհվել է B+ կայուն վարկանիշ:

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով ծրագրվել է 33,983.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն:

4. Նախագծային աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 1,361,510.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսվածից 566,700.9 հազ. դրամով կամ 71.3%-ով ավել, որից 1,100,000.0 հազ. դրամը պետության կողմից պատվիրակվել է Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի կայարանի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար, իսկ 261,510.0 հազ. դրամը՝ կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն ծրագրով նախատեսվել է 290,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսվածից 200,000.0 հազ. դրամով կամ 222.2%-ով ավել, որի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակում, ինչպես նաև Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի զարգացման համալիր սխեմայի մշակում:

6. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով նախատեսվել է 80,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսվածից 30,000.0 հազ. դրամով կամ 60%-ով ավել: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման նախագծի մշակում:

7. **Պատմամշակութային նախագծերի իրականացում** ծրագրով նախատեսվել է 24,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի լրամշակում:

8. **Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 102,000.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 13,700.0 հազ. դրամով կամ 15,5%-ով ավել է 2022 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից, ավելացումը պայմանավորված է պետական տուրքի դրույքաչափերի, ինչպես նաև դատական ընթացակարգերի հաճախականության հետ:

9. **Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 27,902.4 հազ. դրամ, ինչը ներառում է Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, ինչպես նաև ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

10. **Քաղաքացիական պաշտպանության աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն** ծրագրերով 2023 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 137,852.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել թվով 98 հիդրանտ, 10,000 հատ ուղեցույցների ձեռքբերում բնակելի շենքերի բնակիչների վարվելակերպի վերաբերյալ, 1000 հատ կրակմարիչների ձեռքբերում դպրոցների և մանկապարտեզների համար, թվով 267 հատ էլեկտրաշահակների ընթացիկ սպասարկում և վերանորոգում, ինչպես նաև նախատեսվում է աջակցել Երևան քաղաքում իրականացվող զորակոչի իրականացմանը:

11. **Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում** ծրագրով նախատեսվել է 7,080.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

12. **Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն** ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ տնտեսական և առևտրային հարաբերությունները կարգավորել Երևան քաղաքում, մասնավորապես կկարգավորվի

գործող իրավախախտ շրջիկ առևտրի կետերի՝ այդ թվում տրանսպորտային միջոցների, կանխարգելման ընթացակարգերը:

13. Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնիտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ ծրագրով նախատեսվում է կարգավորել ինքնակամ տեղադրված առևտրային օբյեկտների ապամոնիտաժման ընթացակարգերը: Ծրագրի բյուջեն կկազմի՝ 15,000.0 հազ. դրամ:

14. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 189,858.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի 196,009.4 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասի ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև Կոմիտասի անվան կոնսերվատորիայի այգուն հարող Սայաթ Նովա և Մաշտոց պողոտաների սիզամարգերում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ: Միաժամանակ նաև նախատեսվում է Նորք Մարաշ վարչական շրջանի ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, որի իրականացման համար նախատեսվել է շուրջ 24,050.0 հազ. դրամ:

15. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային ծրագիր ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 2,124,783.4 հազ. դրամ, որից 151,435.5 հազ. դրամը՝ Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է, 600,000.0 հազ. դրամը՝ պետության կողմից համաֆինանսավորումը, իսկ 389,405.4 հազ. դրամը՝ ծրագրի դրամաշնորհային ֆոնդը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված թվով 10 նախադպրոցական հաստատությունների՝ հ. 48, հ.71, հ.74, հ.81, հ.109, հ.110, հ.135, հ.138, հ.156, հ.161 մսուր-մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի

վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման բաղադրիչները:

16. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի և դրամաշնորհային ծրագրի երկրորդ փուլի(պատվիրակված լիազորություններ) ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 2,837,450.0 հազ. դրամ, որից 810,700.0 հազ. դրամը՝ ծրագրի դրամաշնորհային ֆոնդն է: Ծրագրով նախատեսվում է՝ պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում, իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված թվով 14 նախադպրոցական հաստատությունների՝ հ.3, հ.17, հ.33, հ.39, հ.40, հ.45, հ.46, հ.56, հ.59, հ.67, հ.72, հ.73, հ.93, հ.118 մսուր-մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի շինարարական աշխատանքներ՝ այդ թվում սեյսմիկ արդիականացում, էներգաարդյունավետության բարելավում և նախագծում ներառված օբյեկտների վերակառուցում, ինչպես նաև մանրամասն դիզայնը և հեղինակային հսկողության ու կառավարման ծառայությունները /ներառյալ տեխնիկական հսկողությունը/ :

17. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 3,494,057.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի՝ 3,137,593.3 հազ. դրամի դիմաց, որը 11.4%-ով ավել է քան նախորդող տարին:

18. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 270,544.4 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչն ավել է 2022 թվականի ճշտված ցուցանիշից 30,804.7 հազ. դրամով կամ 12.9%-ով:

19. Հենապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 198,672.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեից 31,359.4 հազ. դրամով ավել: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի: Ծրագրով նաև նախատեսվում է կապիտալ հիմնանորոգել՝ Ա.Խաչատրյան 4, Վրացական 4-րդ նրբ. 5,7, և 5/1 շենքերի դիմացի հենապատերը, Դավթաշեն կամրջի՝ Արաբկիր վարչական շրջանի կողմից աջակողմյան մասում գտնվող

հենապատը (2021 թվականի վերանորոգված հենապատի շարունակություն), նոր հենապատ կառուցել Դավթաշեն 2-րդ թաղ. 17, 18, 19 և 20 շենքերի բակում, Վարդանանց 32, Քաջազունու 11, Եր Քոչարի 11, Մաշտոցի 51, Ձորափի փողոցից դեպի հիվանդանոց (Դավինչի կլինիկա), Թոթովենցի 10/1 շենքի հարակից տարածքում, Նորքի 105 հասցեի հարակից տարածքում, Նորքի 5-րդ փողոցի՝ Հայփոստի դիմացի հենապատի և 123 մանկապարտեզի հարակից տարածքի պուրակի հենապատի վերանորոգման աշխատանքների իրականացում, 121 և 124 մանկապարտեզների հենապատ/պարսպի կառուցում:

20. Հետիոտնային անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության վերանորոգման լրացուցիչ աշխատանքներ:

21. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 195,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2022 թվականի հաստատված բյուջեից 40,000.0 հազ. դրամով: Այն ուղղվելու է Երևան քաղաքի թվով 44 կամուրջների վերգետնյա անցումների և ուղեանցերի սպասարկմանը, Հաղթանակ կամրջի բարեկարգման, ինչպես նաև Իսակովի պողոտայում գտնվող երկաթուղու անցուղու սյուների ամրացմանը:

22. Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 2,000.0 հազ. դրամ, որը նախատեսվել է Հրազդան կիրճի՝ Արաբկիր վարչական շրջանի հատվածում ընթացիկ պահպանման աշխատանքների համար:

23. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 404,073.1 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 252,101.4 հազ. դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքի տարբեր հատվածներում ընթացիկ վերանորոգման և սալիկապատման աշխատանքներ: Նախատեսվում է նաև իրականացնել մայթերի վերակառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Լենինգրադյան և Շինանրարներ փողոցի մայթեր, Սայաթ-Նովա փողոց՝ Կոնսերվատորիայի հատվածի մայթ, Սարյան 24/1 և 12 հարակից մայթեր, Մոսկովյան փողոց՝ Հ. Թումանյանի արձանի մոտ գտնվող հատվածի մայթ, Ֆրիկի փողոց՝ Սարյան փոստի մոտ գտնվող հատվածի մայթ,

Դեմիրճյան փողոցի մայթ, Գր. Լուսավորիչ փողոցից Խորհրդարանի փողոց տանող մայթ, Անտառային փողոցի հարակից մայթեր, Տ.Մեծ-ից Եր. Քոչար տանող մայթ, Չարենցի 2-րդ նրբ. հ.10 դպրոցի հարակից մայթ, ինչպես նաև կառուցել՝ Շերամի փողոցից դեպի Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոց տանող ճանապարհի ձախակողմյան մասում մայթ, Գալշոյան 10 և 12 շենքերին հարակից մայթ, Նորքի 8-րդ փողոցի աստիճաններ և մայթեր, Այգեգործական փողոցի մայթ:

24. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 1,500.0 հազ. դրամ, նախատեսվում է իրականացնել Նոր Նորք վարչական շրջանի ճաղաշարերի ներկում շուրջ 750քմ:

25. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 431,370.0 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար:

26. Թեքահարթակների կառուցում ծրագրով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով, նախատեսվել է 23,100.0 հազ. դրամ՝ շուրջ 155 թեքահարթակի կառուցման համար:

27. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով նախատեսվել է 351,120.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, հայտարարությունների ցուցատախտակներ: Նախատեսվում է նաև իրականացնել թվով 20 հատ հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի ձեռքբերում և տեղադրում, թվով 28 հատ լուսացուցային համակարգերի պահմպանում և սպասարկում, ինչպես նաև թվով 10 հատ կանգառասարահների ձեռքբերում և տեղադրում:

28. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 765,928.6 հազ. դրամ, որի նպատակն է կարգավորել ճանապարհատրանսպորտային ոլորտը՝ ապահովելով դրա անվտանգությունը: Ծրագրի բյուջեն կազմվել է հիմք ընդունելով 2023 թվականի պետական բյուջեի օրենքի մասին նախագիծը:

29. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումների ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով նախատեսված է 320,862.2 հազ. դրամ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Բաբաջանյան-Աշտարակ փողոցի կառուցման աշխատանքներ, ներգրավվել ծրագրի մասով աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ,

30. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմանդրամի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման ֆինանսական աջակցության դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման ֆինանսական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով նախատեսվում է 11,311,461.1 հազ.դրամ, որի նպատակն է ձեռք բերել թվով 87 նոր ավտոբուս տրանսպորտային ցանցը արդիականացնելու նպատակով:

31. Տրանսպորտային համակարգի արդիականացում ծրագրով նախատեսվում է 439,422.4 հազ. դրամ, որի նպատակն է իրականացնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեի վարչական շենքի կառավարման կենտրոնի վերակառուցման աշխատանքներ, ինչպես նաև «Երևան էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգման համար, մասնավորապես Գ.Լուսավորիչ, Մ.Խորենացու և Ագաթանգեղոս փողոցներով անցնող ստորգետնյա մալուխների փոխարինումը նորով:

32. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագիր (պատվիրակված լիազորություն) ծրագրով նախատեսվել է 3,113,796.8 հազ. դրամ, որի շրջանակներում

նախատեսվում է իրականացնել Իսակով-Արշակունյաց նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներ:

33. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 1,075,328.1 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 1,145,631.2 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել բազմաբնակարան շենքերի համար թվով 100 վերելակ, որի ավելացումը կդիտարկվի բյուջեի լրամշակման շրջանակներում, ինչպես նաև հին վերելակների պահպանումը իրականացնելու համար ձեռք բերել և տեղադրել անհրաժեշտ սարքավորումներ:

34. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,711,974.7 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

35. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն ծրագրով նախատեսվել է 628,000.0 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

36. Ջրոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսվել է 43,500.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 12,200.0 հազ. դրամով կամ 39%-ով ավել: Մասնավորապես նախատեսվում է իրականացնել՝ Երևան քաղաքի բազմալեզու զբոսաշրջային քարտեզի տպագրում, միջազգային ցուցահանդեսների և էքսպոնների մասնակցություն, Նոր զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ստեղծում, ինչպես նաև «Восход солнца» խորագիրը կրող Երևանի զբոսաշրջային գրավչությունների մասին ֆիլմի տեսանկարահանում,:

37. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 39,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը և սպասարկումը:

38. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և

գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 223,373.6 հազ. դրամ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը՝ նախատեսվել է հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար, ինչպես նաև նախատեսվել է 207,873.6 հազ. դրամի չափով սուբսիդավորել «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին:

39. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 328,714.9 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 160,614.9 հազ. դրամով կամ 95.6% ավել: Ծրագիրը նախատեսված է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար: Ավելացումը պայմանավորված է ընկերության կարողությունների հեռանկարի մեծացման, ոլորտային մասնագիտական հաստիքների ավելացման , ինչպես նաև աշխատավարձերը շուկայականին մոտարկելու հետ:

40. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 454,305.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

41. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր 5,262,006.6 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 241,006.6 հազ դրամ ավել, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 620,000.0 հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 4,641,006.6 հազ. դրամի չափով

գ) Շարժական գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,000.0 հազ. դրամի չափով:

42. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին և Ամանորին Երևան քաղաքը ձևավորելու համար:

43. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ

ծրագրով նախատեսվել է 44,370.0 հազ. դրամ՝ որը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին:

44. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվում է 165,758.2 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 32,758.2 հազ. դրամով կամ 24.6%-ով ավել, ծրագրի շրջանակներում 6,000.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների, տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, 13,000.0 հազ. դրամ դրամաշնորհային ծրագրերի, մրցույթների հայտերի լրացման, ինչպես նաև ներդրումային և սուբվենցիոն ծրագրերի կազմման համար մասնագետների ներգրավման, պրեզենտացիաների, ֆիլմերի և այլ նյութերի պատրաստման համար, իսկ 146,758.2 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

45. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ ավտոբուսներում ուղևորների և կուրություն ունեցող հաշմանդամությամբ անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

46. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում ծրագրով նախատեսվել է 555,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի 453,230.8 հազ. դրամի դիմաց, որը նախատեսվում է ուղղել չկանխատեսվող առանձնահատկությամբ ծախսերի վրա:

47. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրին հատկացվել է 50,645.6 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2022 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 339,646.6 հազ. դրամով: Ծրագրով կառուցվելու է աղբամանների համար հարթակներ:

48. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 376,600.5 հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

49. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր ծրագրով նախատեսվել է 4,600,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները:

50. <<Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր>> ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում ծրագրով նախատեսվում է նոր աղբավայրերի կառուցման շրջանակներում կնքված ենթավարկային մարումների նպատակով 10,000.0 հազ. դրամի չափով սուբսիդավորել պայմանագրի կողմ հանդիսացող «Երևան քաղաքի նոր աղբավայր» ՓԲԸ-ին:

51. Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրով նախատեսվել է 213,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեից 488,874.7 հազ. դրամով կամ 69.7%-ով պակաս: Ծրագրով նախատեսվում է իրականացնել հեղեղատար և կոյուղատար համակարգերի ընթացիկ նորոգման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքներ: Մասնավորապես նախատեսվում է հիմնանորոգել և վերակառուցել հետևյալ հասցեները՝ Աջափնյակ վարչական շրջանի հ.111 դպրոցից մինչև Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կոյուղագիծը, Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ թաղամասի 2-րդ միկրոշրջանի հ.1/13 շենքից Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.2/4 շենք տանող հատվածի կոյուղագիծը, Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի հ.27 շենքից դեպի հ.27/1 շենք տանող հատվածի կոյուղագիծը, Էրեբունի վարչական շրջանի Մուշական 6-րդ փողոցի հ.29 (հ.101 դպրոց) հասցեում գտնվող ջրագիծը, Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.75 հասցեում գտնվող կոյուղագիծը, Նոր Նորք վարչական շրջանի Գյուլիքևիայան փողոցի հ.29 շենքից դեպի հ.34 շենք տանող հատվածի կոյուղագիծը, Շենգավիթ վարչական շրջանի Բայդուկովի փողոցում գտնվող կոյուղագիծը:

52. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ Գետառ և Ողջաբերդ գետերի հունների մաքրման նպատակով:

53. Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 14,447.0 հազ դրամ՝ Նուբարաշեն թափոնակուտակիչում բիոգազի հավաքման և այրման շահագործման նպատակով:

54. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 3,550,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 200.000.0 հազ. դրամով կամ 5.3%-ով պակաս, որից 3,400,000.0 հազ. դրամն ուղղվելու է «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանման» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի սուբսիդավորմանը՝ 2022 թվականի չափով, իսկ 150,000.0 հազ. դրամը՝ ավտոաշտարակների ձեռք բերմանը:

55. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 27,932.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար:

56. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 14,520.0 հազ. դրամ: Գումարը նախատեսված է թվով 13 գործող զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

57. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով նախատեսվել է 269,972.1 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 35,472.1 հազ. դրամով կամ 15.1%-ով ավել: Ծրագրով նախատեսված է կանոնակարգել Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծումը:

58. Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ դրամաշնորհային աշխատանքների իրականացում ծրագրերով նախատեսվել է 1,445,193.3 հազ. դրամ՝ վտանգավոր թափոնների կառավարման ծրագրի իրականացման նպատակով, որից 69,693.3 հազ. դրամը համայնքի մասով համաֆինանսավորմամբ:

59. Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում ծրագրով նախատեսվել է 59,200.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի արտադրական մասնաշենքի հիմանանորոգման աշխատանքները:

60. Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում ծրագրով 2023 թվականի բյուջեով նախատեսվել է 3000.0 հազ. դրամ, որը

ուղղվելու է Հրազդան գետում ճահճային բուսականության ոչնչացման համար՝ շուրջ 8 հեկտար:

61. Բնապահպանական կայանների կառուցում ծրագրով նախատեսվել է 126,701.3 հազ. դրամ, որի շրջանակներում կառուցվելու է Գետառ գետի վրա (Հրազդան գետի թափվելու վայրում) մաքրման կայան՝ Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի հ.609-Ա որոշման հիման վրա, ինչպես նաև ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (կապիտալ սուբվենցիա)::

62. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսվել է 35,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 10,000.0 հազ. դրամով կամ 40%-ով ավել: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքներ և այն ինքնակամ կառույցների քանդումը, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների միջոցով:

63. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալած բնակարանների փոխհատուցման ծրագրով 2023 թվականի նախագծով նախատեսվում է 3,564.0 հազ. դրամ՝ Արզումանյան փողոցի վթարային շենքի բնակիչներին փոխհատուցելու նպատակով:

64. Չորրորդ աստիճան վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով 2023 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 500,000.0 հազ. դրամ, որի նպատակն է Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (հանրակացարանի 10-րդ մասնաշենք), Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10 (սպորտային մասնաշենք), Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10/1 հասցեների քանդման ենթակա 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող հանրակացարանային բնակիչներին վերաբնակեցնելու՝ նոր բնակարանների ձեռքբերման համար:

65. Ջրամատակարարման ցանցի կառուցում և վերակառուցում ծրագրով նախատեսվել է 10,200.0 հազ. դրամ՝ Նուբարաշեն վարչական շրջանի 16-րդ փողոցի նոր ջրագծի կառուցման աշխատանքների նպատակով:

66. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով նախատեսվել է 139,380.4 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 87,096.9 հազ. դրամով կամ 166.6%-ով ավել: Նախատեսվում է Շենգավիթ վարչական շրջանում՝ մասնավորապես Արշակունյաց պողոտայում, Բագրատունյաց փողոցում և Գ. Նժդեհի փողոցում տեղադրել լուսատուներ, ինչպես նաև Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծ փողոցում իրականացնել շենքերի գեղարվեստական լուսավորում:

67. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 1,620,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 660,513.6 հազ. դրամով կամ 29%-ով պակաս՝ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1,500,000.0 հազ. դրամ գումարի չափով պետության կողմից նպատակային հատկացում՝ համաձայն ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծի:

68. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 146,278.3 հազ. դրամ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում իրականացվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը, որը նախատեսում է առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով:

69. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 7,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի սեյսմիկ անվտանգության, վթարայնության աստիճանի հետազոտումը և դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

70. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 911,390.1 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի 1,250,045. հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում կատարվելու են վարչական շրջանների հարթ և թեք տանիքների նորոգման, հիմնանորոգման աշխատանքներ: Մասնավորապես հարթ տանիքների մասով նախատեսվում է՝ ամբողջ Երևան քաղաքում, վերանորոգել շուրջ

69,0 հազ. քմ հարթ տանիք, թեք տանիքների կապիտալ հիմնանորոգման մասով նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ հասցեները՝ Աճառյան 18 շենքի, Կոմիտաս 44 շենքի, Ազատության 25 շենքի, Կիլյան 14ա շենքի 2-րդ մուտքի, Տիգրանյան 14 շենքի, Էրեբունու 11 շենքի, Նոր Արեշի 15-րդ փողոցի 7 շենքի, Ավանեսովի 12 շենքի, Վարդանանց 22, 26/1 շենքերի, Քաջազնունի 8 շենքի, Մոսկովյան 27 շենքի, Այգեստան 67 շենքի, Տերյան 71 շենքի, Նալբանդյան 39 շենքի 1-ին մուտքի 11-րդ բնակարանի, Մաշտոցի 6 շենքի 74 բնակարանի, Պարոնյան 15 շենքի, Դեմիրճյան 40 շենքի, Բաղրամյան 1 շենքի 1-ին և 30-րդ բնակարանների, Թումանյան 38 շենքի, Մաշտոցի 7 շենքի, Խանջյան 31,43,7 շենքերի, Ագաթանգեղոսի 29 շենքի, Տ. Մեծ 36,37 և 41 շենքերի, Մաշտոցի 20 շենքի, Թումանյան 10 շենքի, Տ. Մեծի 12,31ա շենքերի, Նալբանդյան 37 շենքի 6-րդ բնակարանի, Բուզանդի 101 շենքի 10-րդ բնակարանի, Սայաթ-Նովա 5 շենքի 27 և 28 բնակարանների, Թումանյան 2-րդ փակուղու 1 շենքի, Մյասնիկյան 2 և 4 շենքերի, Մաշտոց 16 շենքի 7-րդ և 8-րդ բնակարանների, Վարդանանց 16/1 շենքի 23-րդ բնակարանի, Փարպեցի 28 շենքի 8-րդ բնակարանի, Տպագրիչների 8 փողոցի 46-րդ բնակարանի, Պարոնյան 9 շենքի 6-րդ բնակարանի, Մաշտոցի 37 շենքի 70-րդ բնակարանի, Սայաթ-Նովա 13 շենքի, Քաջազնունու 5 շենքի 11-րդ բնակարանի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրով նախատեսվում է նաև առանձին թիթեղների ձեռք բերում, որոնք ուղղվելու են թեք տանիքների մասնակի վերանորոգմանը:

71. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 3,021,192.5 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 640,223.2 հազ. դրամով կամ 26,9%-ով ավել: Վարչական շրջանների կողմից ուսումնասիրությունների և խնդիրների գույքագրման արդյունքում՝ ընտրված բակերի ընթացիկ նորոգման, բարեկարգման, բակային տարածքներում խաղահրապարակների կառուցման և հիմնանորոգման, բակային տարածքներում աստիճանների վերակառուցման, զրուցարանների, նստարանների ձեռքբերման, ինչպես նաև շինանյութի ձեռքբերման և վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում խաղահրապարակների նորոգման համար: Մասնավորապես կապիտալ հիմնանորոգման և կառուցման մասով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել հետևյալ հասցեներում գտնվող շենքերի կամ օբյեկտների հարակից բակային տարածքներում՝ Էստոնական 12 շենքի, Հալաբյան

15 շենքի, Հալաբյան 24,26 շենքերի, Հալաբյան 7 շենքի, Լենինգրադյան 24 շենքի, Էստոնական 11,13 շենքերի, Էստոնական 7,9 շենքերի, Շինարարների 13 շենքի, Ֆուչիկի 2 շենքի, Մարգարյան 2-րդ նրբ.1/1 շենքի, Շիրազի 50 շենքի, Բաշինջադյան 1-ին նրբ. 12 շենքի, Աճառյան 36 շենքի, Խուդյակով 68 շենքի, Դուրյան 33 շենքի, Սոսե 2-րդ նրբանցքի 8 շենքի, Բաղրամյան 50ա և 50բ շենքերի, Կիևյան 13 այգու, Փափազյան 26 շենքի կողային հատվածի, Թբիլիսյան խճուղու 33/3 շենքի , Վրացական 10 շենքի, Քնաքեռ ՀԷԿ 2, 4, 5, 7, 8 և 10 շենքերի, Ա. Խաչատրյան 33/1 շենքի, Դավթաշեն 1-ին թաղամասի 9 շենքի հետնամասի, Դավթաշեն 1-ին թաղամասի 13-14 շենքերի հարակից տարածքի, Դավթաշեն 2-րդ թաղամասի 26 շենքի հետնամասի, Դավթաշեն 2-րդ թաղամասի 14-15 շենքերի հետնամասի, Դավթաշեն 4-րդ թաղամասի 30-31 շենքերի հետնամասի, Ավանեսովի 26 շենքի, Ավանեսովի 20 շենքի, Ավանեսովի 7 շենքի բակի, Ավանեսովի 2/1 շենքի, Տիգրան Մեծի պողոտա 61 շենքի բակի, Նուբարաշենի խճուղու 5/1 շենքի, Խաղաղ Դոնի 1/1 շենքի, Խաղաղ Դոնի 1 շենքի 1-ին մուտքի դիմացի, Խաղաղ Դոնի 1 շենքի 12-րդ մուտքի դիմացի, Խաղաղ Դոնի 23 շենքի, Խաղաղ Դոնի 35 շենքի, Եր. Քոչարի 5,21,13 շենքերի, Մյասնիկյան 2-4 շենքերի, Ամիրյան 12 շենքի, Չարենցի 68-70 շենքերի, Սարյան 24ա-բ շենքերի, Մ. Նալբանդյան 23,31,35,51 շենքերի, Տ. Մեծ 18 շենքի, Վարդանանց 5ա շենքի, Տերյան 83 – Բայրոն 12 շենքերի, Հաղթանակ թաղամասի հ 113 դպրոցին հարակից տարածքի, Րաֆֆու 59,61,69 շենքերի, Անդրանիկի 54 շենքի դիմացի տարածքի, Անդրանիկի 75 շենքի, Նուբարաշեն 6-րդ փողոցի 1-ին նրբանցքի շենքի, Նուբարաշեն 6-րդ փողոցի 1/4 շենքի, Արտաշիսյան 59,59/1,61,63,65,67,63/1 շենքերի հարակից տարածքի, Չելսովի 48,50,52 շենքերի հարակից տարածքի, Ն. Շենգավիթ 11 փողոցի 35,35/1 շենքերի հարակից տարածքի, Մայիսի 9-ի 51 և Չելսովի 8/1 շենքերի միացյալ տարածքի, Արշակունյաց 52 և 52/1 շենքերի հարակից տարածքի, Արշակունյաց 48/3 շենքի, Չելսովի 29 շենքի, Մանանդյան 29 շենքի, Շարուրի 24,24/2,24/3 շենքի, Շիրակի 2 և Արարատյան 64,66 շենքերի, Ալբացիա 2/6 շենքի, Շարուրի 10 և 12 շենքերի, Կարապետ Ուլնեցու 1-ին փակուղու 1-ին շենքի, Սուրենյան 11ա, Յան Ռայնիսի 13,15 շենքերի, Ռուբինյանց 17,19,21 շենքերի, Հասրաթյան 5/1 և 5/2: Ինչպես նաև վարչական շրջանների հետևյալ հասցեներում նախատեսվում է կառուցել մինի ֆուտբոլի դաշտեր՝ Արցախի պողոտայի 10վ և 10գ շենքերի բակում, Աթոյան անցուղու 12 շենքի բակում, Նոր Արեշի 42-րդ փողոցի 1 և 2 շենքերի հարևանությամբ, Նուբարաշենի խճուղու 5/2 շենքի բակում, Խաղաղ Դոնի 27 և 31 շենքերի բակերում,

Ավանտսովի 4 շենքի բակում, Անդրանիկի 34 շենքի բակում, Տիչինա 2-րդ նրբանցքի 121 դպրոցի բակում, հ.152 դպրոցի տարածքում, Իսակովի պողոտաի 52/2 և 52/3 շենքերի բակում, հ.134 դպրոցի հարակից տարածքում, հ.164 դպրոցի հարակից տարածքում, Նուբարաշեն 12-րդ փողոցի 4 շենքի բակում, Վ. Վահյան 1 շենքի հարակից տարածքում, Կ. Ռիլենցու 3-րդ փակուղու 4 շենքի հարակից տարածքում:

72. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 628,716.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 66,279.1 հազ. դրամով պակաս, որից 47,000.0 հազար դրամ գումարը հատկացվելու է վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար:

73. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 335,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի չափով՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար:

74. Կաթսայատների և գույքերի պահպանում ծրագրով նախատեսվել է 15,450.2 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 28,309.1 հազ. դրամով կամ 64.7%-ով պակաս: Նախատեսված գումարով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

75. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով նախատեսվել է 182,855.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված ցուցանիշից 64,852.8 դրամով կամ 55%-ով ավել: Նախատեսված գումարով նախատեսվում է իրականացնել վարչական շրջանների թվով 259 հատ վթարային պատշգամբների կապիտալ վերանորոգում:

76. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է հատկացնել 79,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի բյուջեով նախատեսված 237,000.0 հազ. դրամի դիմաց, բժշկական սարքավորումների՝ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարքեր, աուդիոմետրեր, գաստրոսկոպ, կլինիկական անալիզատորներ, կոագուլոմետրեր, կոլպոսկոպեր, ցենտրիֆուգեր ձեռք բերման և բուժհաստատություններին տրամադրման համար:

77. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 398,362.0 հազ. դրամ՝ 2022 թվականի համեմատ 101,638.0 հազ դրամով պակաս, 2022 թվականից հիմնանորոգվող և անցումային դրույթներով կնքված պայմանագրերով համայնքային ենթակայության տակ գտնվող թվով 2 պոլիկլինիկաների՝ թիվ 5 և թիվ 12, հիմնանորոգման նպատակով:

78. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով նախատեսվել է 101,300.0 հազ. դրամ՝ 2022 թվականի 20,000.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել է Երևանի քաղաքացիներին ըստ կարիքի գնահատման՝ թվով 465 անձի, կոնտրաստավորմամբ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կոմպյուտերային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի, կորոնորագրաֆիկ հետազոտությունների, ինչպես նաև սրտի անոթների ստենոտավորման ծառայությունների տրամադրման համար:

79. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 103,970.4 հազ. դրամ՝ 2022 թվականի ցուցանիշից 926.3 հազ. դրամով պակաս, հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված միջոցառումների ցուցանիշները, ինչպես նաև 2023 թվականի նախագծի շրջանակներում ոլորտի ուսումնասիրության արդյունքում ընտրված միջոցառումների քանակը: Ծրագիրն իր մեջ ներառում է Երևան և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակներում «Մասնակցություն Ստեփանակերտ-Երևան պատանեկան մարզական խաղերին», «Հրաձգության առաջնություն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմի աշխատակիցների միջև», «Հաշմանդամություն ունեցող անձանց մարզական սպարտակիադա» «Ֆուտզալի Երևանի բաց առաջնություն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների և դեսպանատների աշխատակիցների միջև» «Էրեբունի Երևան տոնակատարության շրջանակում մարզական ցուցադրական միջոցառումներ», «Երևան քաղաքի 10 լավագույն մարզիկների պարգևատրում», «Paint Ball-ի առաջնություն», «Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզամշակութային միջոցառում» և այլ սպորտային միջոցառումներ:

80. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 720,644.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշի համեմատ 48,152.0 հազ դրամով ավել, որով նախատեսվում է իրականացնել

Հաղթանակի 40-ամյակին նվիրված զբոսայգու հիմնանորոգման 2-րդ փուլը, այդ թվում այգու հուշարձանի հիմնանորոգումը, Օղակաձև զբոսայգու 2-րդ հատվածի «Երիտասարդական» մետրոյի կայարանի հարակից ջրավազանի հիմնանորոգումը, Մալաթիա-Սեբաստիա վարչանի շրջանի «Սուրբ Երրորդություն» եկեղեցու բակում այգու /ջրավազան/ հիմնանորոգումը, Կարեն Դեմիրճյանի արձանի պատվանդանի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հարակից զբոսայգու լուսավորության արդիականացման աշխատանքներ, «Ջինվորի տուն վերականգնողական կենտրոն»-ի հարակից այգու բարեկարգման աշխատանքներ, Նոր Նորք վարչական շրջանում՝ Գայի պողոտայի 37 շենքին հարակից այգու, Գայի պողոտայի 2 շենքին հարակից այգու և Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցի դիմացի շատրվանների հիմնանորոգում, Նուբարաշեն վարչական շրջանի 7-րդ փողոցին կից այգու հիմնանորոգում, Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում հանգստի գոտիների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ: Նախատեսվում նաև իրականացնել Դավթաշեն վարչական շրջանի թիվ 200 դպրոցի հարակից տարածքի պուրակի հիմնում, Արաբկիր վարչական շրջանի Վահագն Դավթյանի անվան այգու ամառային ամֆիթատրոնի տանիքի և հատակի կառուցում, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել Սիրահարների այգու ընթացիկ պահպանում և Երևանի 2800-ամյակին նվիրված, Սքեյթ-պարկ, Մալաթիա-Սեբաստիա Բ2 թաղամասում գտնվող այգու պահպանման նպատակով կոմունալ վճարների իրականացում:

81. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 669,661.9 հազ. դրամ՝ 2022 թվականի համեմատ 64,927.7 հազ. դրամ ավել, ինչը պայմանավորված է ՀՀ-ում 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ: Նախատեսվում է Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

82. Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ գրադարանների վերազինման, մասնավորապես նոր թողարկված, արդի և ժամանակակից գրականության ձեռքբերման նպատակով, որը 2022 թվականի համեմատ ավել է 20,000.0 հազ. դրամով: Ծրագիրը սկիզբ է առել 2022 թվականից և ունի շարունակական բնույթ:

83. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար նախատեսվել է 324,809 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 3,206.4 հազ. դրամով ավել, ինչը պայմանավորված է ՀՀ-ում 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով՝ 297,759.3 հազ. դրամ և համայնքի բյուջեի միջոցներով՝ 27,049.7 հազ. դրամ ֆինանսավորել՝ «Երևան քաղաքի Պատմության թանգարան», «ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան», «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան», «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ներին, ընդ որում վերջինս ֆինանսավորվում է միայն համայնքային բյուջեից:

84. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 539,186.8 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով, 2022 թվականի հաստատված բյուջեից 58,866.7 հազ. դրամով ավել, ինչը պայմանավորված է ՀՀ-ում 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ::

85. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 1,039,904.5 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեից 196,557.8 հազ. դրամով ավել: Ծրագիրն իր մեջ ներառում է Երևան պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերի, Կանանց միջազգային օրվա /մարտի 8/, Թատրոնի միջազգային օրվա /մարտի 27/, Ջազի միջազգային օրվա /ապրիլի 30/, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա /հունիսի 1/ Յեղասպանության զոհերի հիշատակի օրվա /ապրիլի 24/, Ամանորյա և այլ մշակութային միջոցառումներ:

86. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 429,904.8 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումները այս մասով կազմում է՝ 308,016.7 հազ. դրամ, մնացած մասը ֆինանսավորվելու է համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

87. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 25,000.0 հազ. դրամ՝ այգու էլեկտրականության ներքին ցանցի բարելավման աշխատանքների նպատակով:

88. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 153,234.6 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 151,504.5 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱԿ-ներին և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ին սուբսիդավորելու նպատակով, իսկ ավելացումը պայմանավորված է ՀՀ-ում 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

89. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 457,064.6 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

90. Թատրոնների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 290,390.0 հազ. դրամ՝ Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի վերազինման և տեխնիկական արդիականացման համար:

91. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեից 14,000.0 հազ. դրամով ավել՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

92. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 17,516.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի (ICLEI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի և Հայաստանի համայնքների միություն ՀԿ-ին անդամակցության նպատակով:

93. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 11,496,347.9 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 10,471,809.9 հազ. դրամի դիմաց: Ավելացումը պայմանավորված է 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի ավելացմամբ: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 30.0 հազ. դրամ: Յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար նախատեսվել է ամսական 1000,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով երեխայի սննդի նորմատիվի պահպանումը՝ յուրաքանչյուրի օրական 485 դրամ հաշվարկով:

94. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 210,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեից 10,000.0 հազ. դրամով ավել, ինչի շրջանակներում կարիքի գնահատման միջոցառումների արդյունքներից ելնելով նախատեսվում է Երևանի համայնքի ենթակայության մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք, կենցաղային էկտրական սարքավորումներ և այլ անհրաժեշտ գույք, 60,000.0 հազ. դրամի սահմաններում նախատեսվում է մանկապարտեզների սաների համար ձեռք բերել ուսուցողական և զարգացնող մանկական խաղեր, այդ թվում՝ դիդակտիկ և զարգացնող նյութեր : Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

95. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 27,037.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 22,637.5 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա (նախակրթարանների մասով):

96. Հանրակրթական ուսուցում ծրագրով նախատեսվել է 17,903,942.7 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 16,349,489.9 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

97. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 4,838,234.6 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշից 568,877.1 հազ. դրամով ավել: Ծրագիրը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը ինչով էլ

պայմանավորված է ծրագրի ավելացումը՝ կապված 2023 թվականի հունվարի 1-ից սպասվող նվազագույն աշխատավարձի ավելացմամբ: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների՝ «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների, պահպանման ծախսերը /սուբսիդավորումը/, որոնք նախատեսվել են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 55,863.0 հազ. դրամի չափով:

98. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 87,300.0 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքներից ելնելով, Երևանի ենթակայության տակ գտնվող արտադպրոցական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով՝ երաժշտական գործիքների, վարչական և սպորտային գույքերի ձեռք բերման և տրամադրման համար: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

99. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 6,793.0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեի 7,071.8 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

100. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 60,353.9 հազ. դրամ՝ 2022 թվականի ճշտված բյուջեի 60,136.0 հազ. դրամի դիմաց, որպես սուբսիդիա՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

101. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 91,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսվածից 101,600.0 հազ. դրամով պակաս՝ Շենգավիթի համալիր մարզաձեռքի մանկապատանեկան մարզադպրոցի նկուղի և թվով 7 մարզասրահների կապիտալ հիմնանորոգման համար:

102. Աջակցություն արտադարձական կազմակերպություններին ծրագրով նախատեսվել է 76,700.0 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության տակ գտնվող սպորտ դպրոցների կողմից առանձին կազմակերպվող միջոցառումները և դպրոցների գործունեության առանձին ծրագրերը իրականացնելու համար՝ դրամաշնորհային աջակցության նպատակով:

103. Նախադարձական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 1,667,830.0 հազ. դրամ՝ 2022 թվականից հիմնանորոգվող և անցումային դրույթներով կնքված պայմանագրերով թվով 9 մուր-մանկապարտեզների՝ հ.1, հ.44, հ.50, հ.61, հ.77, հ.95, հ.137, հ.143 և հ.147 հիմնանորոգման համար, ինչպես նաև թվով 6 մանկապարտեզների՝ հ.36, հ.48, հ.71, հ.81, հ. 82 և հ.90 բակերի հիմնանորոգման համար:

104. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 64,900.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում են մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, առարկայական օլիմպիադաներ, հանրային առողջապահության միջոցառումներ, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ, կիրառական ռազմագիտության միջոցառումներ, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացման ուղղված ծրագրեր, ինչպես նաև Երևանի դպրոցականների շրջագայություն «Երևան սիթի տուր» գրոսաշրջային երթուղային ծրագրի շրջանակում:

105. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 37,662.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ «2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

106. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 88,128.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ «2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

107. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է

38,433.8 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

108. Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 15,099.99 հազ. դրամ, հաշվարկվել է՝ նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

109. Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն ծրագրով նախատեսվում է 4,500.0 հազ. դրամ: Ծրագիրը նախատեսվում է քաղաքային, մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ներգրավված համար, ինչպես նաև վարչական շրջաններում խնամակալության և հոգաբարձության անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման համար վերապատրաստումների կազմակերպման նպատակով տարածքների վարձակալության համար:

110. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրված նոր համակարգի շարունակական զարգացում՝ արդյունավետ կառավարման նպատակով ծրագրով նախատեսվել է 1,000.0 հազ. դրամ՝ Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպման նպատակով:

111. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվել է 120.380.0 հազ. դրամ 2022 թվականի 136,154.0 հազ. դրամի դիմաց՝ տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերին միջոցառումների իրականացման, ինչպես նաև այլ նպատակային և թիրախային սոցիալական ծրագրերի համար, այդ թվում համապատասխան մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում՝ Գիտելիքի օրվա կապակցությամբ՝ 1-12 դասարանների երեխաներ ունեցող ընտանիքներին լրակազմով պայուսակների տրամադրում, Հաշմանդամություն ունեցող անձանց օրվա կապակցությամբ՝ հաշմանդամություն ունեցող հուշանվերների և անհրաժեշտ պարագաների տրամադրում, Ընտանիքի օրվա կապակցությամբ՝ բազմազավակ ընտանիքներին տնտեսական ապրանքների և հիգիենայի պարագաների փաթեթների տրամադրում:

112. Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով նախատեսվել է 79,980.0 հազ. դրամ՝ տարբեր սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով:

113. «Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում» ծրագրով նախատեսվել է 9000.0 հազ. դրամ: Ծրագիրը իր մեջ ներառում է սոցիալական աջակցություն և ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցություն և կարիքների գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների մատուցում:

114. «Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն» ծրագրով նախատեսվել է 124,150.0 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ ընտանիքներին աջակցության, այդ թվում՝ սննդի և հիգիենայի պարագաների փաթեթների, կենցաղային տեխնիկայի և այլ անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և տրամադրման, բնակարանների մասնակի վերանորոգման և այլ ծրագրերի մշակման և իրականացման:

115. Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ՝ թվով 80 փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին աջակցության նպատակով:

116. Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն ծրագրով նախատեսվել է 98,152.0 հազ. դրամ՝ 2022 թվականի 138,644.5 հազ. դրամի դիմաց: Ծրագիրը իր մեջ ներառում է տարբեր աջակցության միավորներ, այդ թվում՝ կենցաղային, սննդային փաթեթների ու նպատակային նյութերի ձեռքբերման և ընթացիկ վերանորոգումների տեսքով:

117. Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազար դրամ՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի՝ «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 254-Ն որոշումը, համապատասխան թիրախային խմբին Երևան համայնքում սոցիալական աջակցություն

տրամադրելու նպատակով, այդ թվում՝ ՀՀ և ԱՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված /մահացած/ ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանն նպատակով բնակարանների վերանորոգում, գույքի ձեռքբերում և տրամադրում, Պետական բարձրագույն և նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անդամների ուսման վարձի մասնակի հատուցում, տարերարային և տեխնաձին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում բնակչությանն անհետաձգելի օնության տրամադրում՝ այդ թվում գույքի տրամադրման և բնաիրային փաթեթների տեսքով, ինչպես նաև անհետաձգելի սոցիալական լուծում պահանջող խնդիրների լուծումը:

118. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 666,792.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

119. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 795,720.0 հազ. դրամ, 2022 թվականի ցուցանիշից 129,132.0 հազ. դրամով ավել: Յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի (գումարի) գումարը նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, շախմատի դպրոցների, մուր-մանկապարտեզների աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի աշխատակիցների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների համար, ինչպես նաև մարզադպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, ՄՊՍԿ-ների, մշակույթի կենտրոնների, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևան

հիմնադրամ>>-ի, <<Երևանի ավտոբուս>> ՓԲԸ-ի <<Ջրային կառույցներ>> ՓԲԸ-ի աշխատակիցներին:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 432,602.7 հազ. դրամի չափով պակասուրդ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 944,402.7 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 1,000,000.0 հազ. դրամի չափով: Միաժամանակ նախատեսվում է 11,800.0 հազ. դրամն ուղղել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, իսկ 2,000,000.0 հազ. դրամը՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2022 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2022 թվականի նոյեմբերի 8-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, նոյեմբերի 15-ին հրավիրված նիստում սովել է իր դրական եզրակացությունը 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 30-ը Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <http://www.e-draft.am> կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2022 թվականի նոյեմբերի 24-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լուսման եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթեթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և

տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Այսպիսով, Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *Եկամուտների գծով՝ 105,103,316.6 հազ. դրամ,*
2. *Ծախսերի գծով՝ 105,535,919.3 հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 432,602.7 հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
 (հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		105,535,919.3	103,972,209.9	9,726,973.2
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	x	95,908,946.1	103,972,209.9	100,000.0
	այդ թվում՝				
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ	x	11,220,025.4	11,220,025.4	-
	այդ թվում՝				
4110	<i>ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՉՆԵՐ ԵՎ ՀԱՎԵՆԱԿՃԱՐՆԵՐ</i>	x	11,220,025.4	11,220,025.4	-
	որից՝				
4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարձեր	4111	10,922,389.1	10,922,389.1	-
4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	297,636.3	297,636.3	-
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՈՔԲԵՐՈՒՄ	x	11,857,541.5	11,857,541.5	-
	այդ թվում՝				
4210	<i>ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</i>	x	2,007,741.1	2,007,741.1	-
	որից՝				
4212	- Էներգետիկ ծառայություններ	4212	362,093.1	362,093.1	-
4213	- Կոմունալ ծառայություններ	4213	497,543.3	497,543.3	-
4214	- Կապի ծառայություններ	4214	220,805.7	220,805.7	-
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	868,735.0	868,735.0	-
4216	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	58,564.0	58,564.0	-
4220	<i>ԳՈՐԾՈՒԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ</i>	x	65,000.0	65,000.0	-
	որից՝				
4221	- Ներքին գործուղումներ	4221	5,000.0	5,000.0	-
4222	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	60,000.0	60,000.0	-
4230	<i>ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՈՔ ԲԵՐՈՒՄ</i>	x	1,765,054.4	1,765,054.4	-
	որից՝				
4231	- Վարչական ծառայություններ	4231	12,705.0	12,705.0	-
4232	- Համակարգչային ծառայություններ	4232	52,928.8	52,928.8	-
4233	- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	41,000.0	41,000.0	-

Տրիբ NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4234	- Տեղեկատվական ծառայություններ	4234	24,834.0	24,834.0	-
4235	- Կառավարչական ծառայություններ	4235	72,000.0	72,000.0	-
4237	- Ներկայացուցչական ծախսեր	4237	69,145.5	69,145.5	-
4238	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1,492,441.1	1,492,441.1	-
4240	<i>ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՆՔ ԲԵՐՈՒՄ</i>	x	124,516.9	124,516.9	-
	որից՝				
4241	- Մասնագիտական ծառայություններ	4241	124,516.9	124,516.9	-
4250	<i>ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)</i>	x	5,933,447.3	5,933,447.3	-
	որից՝				
4251	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	5,506,408.8	5,506,408.8	-
4252	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	427,038.5	427,038.5	-
4260	<i>ՆՅՈՒԹԵՐ</i>	x	1,961,781.8	1,961,781.8	-
	որից՝				
4261	- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	76,987.4	76,987.4	-
4264	- Տրանսպորտային նյութեր	4264	1,206,142.7	1,206,142.7	-
4267	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	160,076.7	160,076.7	-
4268	- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	518,575.0	518,575.0	-
4300	1.3 ՏՈԿՈՍԱԿՃԱՐՆԵՐ	x	39,539.8	39,539.8	-
	այդ թվում՝				
4320	<i>ԱՐՏԱՔԻՆ ՏՈԿՈՍԱԿՃԱՐՆԵՐ</i>	x	39,539.8	39,539.8	-
	որից՝				
4322	- Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	39,539.8	39,539.8	-
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	x	46,751,190.7	46,751,190.7	-
	այդ թվում՝				
4410	<i>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</i>	x	46,599,820.7	46,599,820.7	-
	որից՝				
4411	- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	46,599,820.7	46,599,820.7	-
4420	<i>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</i>	x	151,370.0	151,370.0	-
	որից՝				
4421	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	151,370.0	151,370.0	-
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	510,644.2	510,644.2	-
	այդ թվում՝				
4530	<i>ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ</i>	x	470,644.2	470,644.2	-
	որից՝				

Տրիբ NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում`	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	15,500.0	15,500.0	-
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4638	43,850.2	43,850.2	-
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	411,294.0	411,294.0	-
4540	<i>ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ</i>	x	40,000.0	40,000.0	-
	որից`				
4543	- Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	40,000.0	40,000.0	-
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	x	907,161.6	907,161.6	-
	այդ թվում`				
4630	<i>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ</i>	x	907,161.6	907,161.6	-
	որից`				
4633	- Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	7,000.0	7,000.0	-
4634	- Այլ նպաստներ բյուջեից	4729	900,161.6	900,161.6	-
4700	1.7 ԱՅԼ ԾԱՆՍԵՐ	x	24,622,842.9	32,686,106.7	100,000.0
	այդ թվում`				
4710	<i>ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</i>	x	226,496.0	226,496.0	-
	որից`				
4712	- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	226,496.0	226,496.0	-
4720	<i>ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐՔԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՅՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՐ</i>	x	135,507.1	135,507.1	-
	որից`				
4723	- Պարտադիր վճարներ	4823	135,507.1	135,507.1	-
4760	<i>ԱՅԼ ԾԱՆՍԵՐ</i>	x	21,388,085.4	21,388,085.4	-
	որից`				
4761	- Այլ ծախսեր	4861	21,388,085.4	21,388,085.4	-
4770	<i>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ</i>	x	2,872,754.4	10,936,018.2	100,000.0
	որից`				
4771	- Պահուստային միջոցներ	4891	2,872,754.4	2,772,754.4	100,000.0
4772	այդ թվում` համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումները	x	-	8,163,263.8	-
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ	x	14,888,979.8	-	14,888,979.8
	այդ թվում`				
5100	1.1 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	14,888,979.8	-	14,888,979.8
	այդ թվում`				
5110	<i>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	x	10,280,682.4	-	10,280,682.4
	որից`				

Տրոխ NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
5111	- Շենքերի և շինությունների ձեռքբերում	5111	500,000.0	-	500,000.0
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1,008,939.9	-	1,008,939.9
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	8,771,742.5	-	8,771,742.5
5120	<i>ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</i>	x	2,803,787.4	-	2,803,787.4
	որից՝				
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	150,000.0	-	150,000.0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	189,357.8	-	189,357.8
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	2,464,429.6	-	2,464,429.6
5130	<i>ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</i>	x	1,804,510.0	-	1,804,510.0
	որից՝				
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	40,000.0	-	40,000.0
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1,764,510.0	-	1,764,510.0
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	x	(5,262,006.6)	-	(5,262,006.6)
	այդ թվում՝				
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	x	(621,000.0)	-	(621,000.0)
	այդ թվում՝				
6110	<i>ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ</i>	8111	(620,000.0)	-	(620,000.0)
6120	<i>ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ</i>	8121	(1,000.0)	-	(1,000.0)
6400	ԶԱՐՏԱԴՐԱԿԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	x	(4,641,006.6)	-	(4,641,006.6)
	այդ թվում՝				
6410	<i>ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ</i>	8411	(4,641,006.6)	-	(4,641,006.6)

ՑԱՆԿ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ըստ Երևան համայնքի բյուջեի ծրագրերի

N	Ծրագրի անվանումը	Գումարը
	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43,783,278.50
1	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում	33,983.0
2	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ	2,026,750.0
3	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի դրամաշնորհային ծրագիր	810,700.0
4	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր	72,343.8
5	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող՝ քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում	248,518.4
6	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր /ճանապարհաշինություն/	2,603,245.7
7	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող՝ քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում	69,508.7
8	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագիր	3,113,796.8
9	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	765,928.6
10	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման ֆինանսական աջակցության դրամաշնորհային ծրագիր	2,109,080.1
11	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման ֆինանսական աջակցության ծրագիր	9,202,381.0
12	Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում	2,711,974.7
13	Մետրոպոլիտենի կայարանների կառուցման մնացած փուլերի գծով նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	1,100,000.0
14	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր	95,945.9
15	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր	46,878.9
16	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր /կատարման ապահովում/	3,454.2
17	Նախադպրոցական կրթություն	27,037.0
18	Հանրակրթական ուսուցում /տարրական/	8,204,214.7
19	Հանրակրթական ուսուցում /հիմնական/	9,448,623.2
20	Հանրակրթական ուսուցում /միջնակարգ/	251,104.8
21	«Հակոբ Կոջոյան կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	6,793.0
22	Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	37,662.2
23	Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը	38,433.8
24	Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչ վերապատրաստում	88,128.0
25	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	666,792.0

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)

(հազար դրամներով)

Տողի NN		Ընդամենը	այդ թվում՝	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱԿԵՆՈՒՐԴ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	(432,602.7)	-	(432,602.7)

ՑԱՆԿ

ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ)

Ըստ Երևան համայնքի բյուջեի ծրագրերի

հազար դրամներով

N	Ծրագրի անվանումը	Գումարը
	ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	7,324,838.8
1	Երևան քաղաքի ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում	7,080.0
2	Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	3,284,000.0
3	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգատնային մատակարարման ծրագրին պետական աջակցություն	600,000.0
4	Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն	628,000.0
5	Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ	1,500,000.0
6	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	297,759.3
7	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	308,016.7
8	Թատերական ներկայացումներ	457,064.6
9	Արտադպրոցական դաստիարակություն	55,863.0
10	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	60,353.9
11	Գետառի վրա ջրերի մաքրման կայանի նախագծանախահաշվային և կառուցման աշխատանքներ	126,701.3

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒԴԻ)
 ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8010	ԸՆԴԱՄԵՆԸ՝		432,602.7	-	432,602.7
	այդ թվում՝				
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂՅՈՒՆՆԵՐ		432,602.7	-	432,602.7
	այդ թվում՝				
8110	1. ՓՈՒՍՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐ		944,402.7	-	944,402.7
	այդ թվում՝				
8120	1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում)		944,402.7	-	944,402.7
	այդ թվում՝				
8121	1.2.1. Վարկեր		944,402.7	-	944,402.7
	այդ թվում՝				
8122	- վարկերի ստացում	9112	944,402.7	-	944,402.7
	որից՝				
8124	այլ աղբյուրներից		944,402.7	-	944,402.7
8160	2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		(511,800.0)	-	(511,800.0)
	այդ թվում՝				
8161	2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն		(1,511,800.0)	-	(1,511,800.0)
	այդ թվում՝				
8163	- իրավ. անձ. կանոնադր. կապիտալում պետ. մասնակց. պետ. սեփակ. հանդիսացող անշարժ գույքի (բացառ. հողերի), այդ թվում՝ անավարտ շինարար. օբյեկտների մասնավորեցումից առաջաց. միջոց-ից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	9213	500,000.0	-	500,000.0
8164	Բաժնետոմսերի եվ կապիտալում այլ մասնակցության ձեռք բերում	6213	(2,011,800.0)	-	(2,011,800.0)
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ՝		1,000,000.0	-	1,000,000.0
	այդ թվում՝				
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	400,000.0	400,000.0	-
	որից՝				
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը		-	-	-
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		400,000.0	400,000.0	-
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ	9330	1,000,000.0	-	1,000,000.0
	որից՝				

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		600,000.0	-	600,000.0
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը		400,000.0	-	400,000.0

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՅԵՐԻ

h / h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	1	2	3	4
1	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(22.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Վերոհիշյալ Նախագծերի հանրային քննարկման ժամկետն ավարտվում է 2021 թ. նոյեմբերի 30-ին: Սակայն այսօրվա՝ 2021թ. նոյեմբերի 23-ի, դրությամբ ՀՀ ԱՆ www.e-draft.am կայքում չկա որևէ նշում դրանց կողմ և դեմ քվեարկած անձանց մասին: Կարո՞ղ եք արդյոք ներկայացնել այդ վիճակագրությունն՝ ըստ Նախագծերի, քանզի դրանք կարևոր ցուցիչներ են Նախագծերի նկատմամբ հանրային վստահության ու հետաքրքրության մասին: Ավելին, այդ Նախագծերի «Ամփոփաթերթ» բաժնում առայժմ չկան որևէ առաջարկություններ: Այդ փաստը նույնպես վկայում է կամ Նախագծերի նկատմամբ հանրային անվստահության մասին, ինչը հավանաբար պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի գործունեության անարդյունավետությամբ, կամ էլ հանրային</p>	<p>Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի թիվ 89-99 շենքերի հարակից տարածքների ասֆալտապատման, շենքերի մուտքերի վերանորոգման, ինչպես նաև բակում գտնվող մարզադաշտի վերանորոգման և սպորտ մարզական գույքի տեղադրման աշխատանքները՝ համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում, կներառվեն 2023 թվականի բյուջեի համապատասխան ծրագրերի շրջանակներում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախագծա-</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>անտարբերության մասին: Հանրային անվտանգությունն ու անտարբերությունը ձևավորվել են առնվազն հետևյալ փաստերի հիման վրա, որոնց առնչվել է մեր կազմակերպությունը: Այսպես, 1. ինչպես 2019, այնպես էլ 2020, 2021, 2022 թվականների համանման Նախագծերի վերաբերյալ մեր կազմակերպությունը ներկայացրել էր համապատասխան հարցեր ու առաջարկություններ, որոնք լսվել են դրանց հանրային քննարկումների ժամանակ: Չնայած այն բանին, որ հանրային քննարկումների ժամանակ մեր հարցերին ու առաջարկություններին տրվել են բացատրություններ ու պատասխաններ, ինչպես նաև մեր հարցադրումներին ուղարկվել են պատասխանների ամփոփաթեթեր, այդուհանդերձ մեր բարձրացված հարցադրումները այդպես էլ հիմնականում մնացել են չլուծված, իսկ առաջարկությունները՝ չիրականացված: Մասնավորապես, 2021 թ. նոյեմբերի 9-ին մասնակցեցի Երևանի 2022 թ. զարգացման ծրագրի և բյուջեի նախագծի հանրային քննարկմանը և հանգամանորեն ներկայացրեցի իմ հարցերն ու առաջարկությունները: Այդ խնդրով Երևանի քաղաքապետին էր դիմել նաև ՀՀ ԱԺ պատգամավոր Գ.Պապոյանը: Երևանի քաղաքապետարանի պաշտոնյաները,</p>	<p>նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը գտնվում է գնման գործընթացում:</p>	
--	--	---	---	--

հատկապես Երևանի քաղաքապետի նախկին տեսակալ պարոն Ս.Ներսեսյանը, բանավոր, ապա նաև գրավոր կերպով (2021 թ. նոյեմբերի 19-ի թիվ ՀՀ/143810 պաշտոնական պատասխան նամակով) հավաստիացրեցին, որ հանրային քննարկման ժամանակ հնչեցրած իմ հարցադրումների, առարկությունների և առաջարկությունների մի մասը ընդունված է, մի մասը ներառված է Երևան քաղաքի 2022 թ. բյուջեի մեջ, իսկ մի մասը չի ընդունվել: Սակայն ցավոք այդպես էլ այդ խոստումները 2022 թ. չկատարվեցին: Այդ անգործության մասին տեղեկացրել եմ ՀՀ ԱԺ պատգամավոր Գ.Պապոյանին, որի օգնականներին Երևանի քաղաքապետարանից մի քանի անգամ հավաստիացրել են, որ տրված խոստումները կկատարվեն 2022 թ. ընթացքում: Սակայն զուր: Ճարահատյալ 2022 թ. սեպտեմբերի 6-ին կրկին դիմել էի Երևանի քաղաքապետին՝ վերահսկողության կարգով ստուգելու կատարողական կարգապահության վիճակը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ Երևան քաղաքի զարգացման 2022 թ. ծրագրի, 2022 թ. բյուջեի և ավագանու այլ որոշումների նախագծերի հանրային քննարկման ժամանակ ներկայացված մեր առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ: Այդ կապակցությամբ ստացել եմ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի №

		<p>42/90239-22 պատասխան նամակը, որում ասվում է, որ. «Ի պատասխան Ձեր՝ 06.09.2022թ. հ. 625870 Երևանի քաղաքապետին հասցեագրված գրության, տեղեկացվում է, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից Բաբաջանյան փողոցի թիվ 89-99 շենքերի բակում գտնվող մարզադաշտի վերակառուցման համար պատվիրվել է կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր, իսկ բակի ասֆալտապատումը, սպորտ մարզական գույքի տեղադրումը և շենքերի մուտքերի վերանորոգումը կներառվեն վարչական շրջանի 2023թ. բարեկարգման ծրագրերում:»:</p> <p>Ցավոք, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ աշխատանքները չեն ներառված Երևան քաղաքի 2023 թ. պետական բյուջեի նախագծում: Հույս ենք հայտնում, որ այս անգամ Երևանի քաղաքապետարանը պարտաճանաչ կգտնվի և կկատարի Երևան քաղաքի բնակիչների ու ՀՀ ԱԺ պատգամավոր Գ.Պապոյանի խնդրանքը և Երևան քաղաքի բյուջեում կներառի մեր 4 տարի վաղեմության խնդրանքը,</p>		
2	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(22.11.2022թ. առաջարկն</p>	<p>Թեև Ծրագրում ներկայացված են տարբեր ոլորտների զարգացման ծրագրերի կոնկրետ միջոցառումներ, այդուհանդերձ դրանցում մեծամասամբ բացակայում են արդյունքային ցուցանիշները, որոնք հիմք կհանդիսանային Ծրագրի մոնիթորինգի ու իրականացման</p>	<p>Երևան համայնքի բյուջեն կազմված է ծախսային բյուջետավորման սկզբունքով՝ հետևելով ՀՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի 730-Ն հրամանին, որը թերևս</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

	<p>ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>գնահատման համար: Հետևաբար պետք է ամրագրել, որ Ծրագիրը կազմվել է ռազմավարական պլանավորման ու ծրագրային բյուջետավորման ընդունված մեթոդաբանությունների շեղումներով: Այդ հանգամանքն էլ հիմք է դարձել Երևան քաղաքի 2023 թ. բյուջեի նախագծի ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունից շեղումներին:</p>	<p>համայնքների բյուջետավորմանը վերաբերող միակ նորմատիվ իրավական ակտն է:</p>	
3	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(22.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Համաձայնվելով մայրաքաղաքում առողջապահության ոլորտում ներկայացված հիմնախնդիրների հետ, այդուհանդերձ կարծում ենք, որ հիմնախնդիրներ են նաև. – Պոլիկլինիկաներում լաբորատոր հետազոտությունների ծավալի սահմանափակ լինելը, ինչի արդյունքում ՀՀ քաղաքացիները, այդ թվում նաև սոցիալական ու հատուկ խմբերում ընդգրկված անձինք ստիպված են լինում դիմելու այլ լաբորատորիաների՝ վճարովի հիմունքներով ծառայություններ ստանալու համար, – Պոլիկլինիկաներում գործիքային հետազոտությունների ցածր, շատ դեպքերում ոչ վստահելի մակարդակը, ինչի արդյունքում ՀՀ քաղաքացիները, այդ թվում նաև սոցիալական ու հատուկ խմբերում ընդգրկված անձինք ստիպված են լինում դիմելու այլ ախտորոշիչ կազմակերպությունների՝ վճարովի հիմունքներով ծառայություններ ստանալու</p>	<p>Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է հատկացնել 79,000.0 հազ. դրամ բժշկական սարքավորումների՝ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարքեր, աուդիոմետրեր, գաստրոսկոպ, կլինիկական անալիզատորներ, կոագուլոմետրեր, կոլպոսկոպեր, ցենտրիֆուգեր ձեռք բերման և բուժհաստատություններին տրամադրման համար:</p> <p>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով նախատեսվել է 101,300.0 հազ. դրամ,որի շրջանակներում</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>համար, → միաժամանակ պոլիկլինիկաներում գործիքային հետազոտությունների ծառայություններ մատուցող կաբինետների քանակը սահմանափակվում է 1-ով, ինչի արդյունքում ոչ միայն հերթեր են գոյանում, այլև դրանում ծառայություն մատուցող մասնագետները աշխատում են խիստ լարված ռեժիմով, ինչը բնականաբար ազդում է նրանց հետազոտությունների որակի վրա: Հետևաբար առաջարկում ենք Ծրագրի «Առողջապահություն» բաժնում լրացնել վերոհիշյալ հիմնախնդիրները և դրանց համապատասխան Ծրագրում նախատեսել միջոցառումներ, իսկ բյուջեում՝ ծախսեր:</p>	<p>նախատեսվել է Երևանի քաղաքացիներին ըստ կարիքի գնահատման՝ թվով 465 անձի, կոնտրաստավորմամբ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կոմպյուտերային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի, կորոնոգրաֆիկ հետազոտությունների, ինչպես նաև սրտի անոթների ստենտավորման ծառայությունների տրամադրման համար: Սույն ծրագրերը հանդիսանում են ընթացիկ ծրագրեր, ուստի դրանք կրում են շարունակական բնույթ և հնարավորության դեպքում ապահովվում է նաև ծրագրերի ավելի լայն ֆինանսավորումը:</p>	
4	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(22.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի հրապարակման միասնական</p>	<p>Համաձայնվելով մայրաքաղաքում բնապահպանության ոլորտում ներկայացված հիմնախնդիրների հետ, այդուհանդերձ կարծում ենք, որ Ծրագրի «Բնապահպանություն» բաժնում նշված 6-րդ հիմնախնդրի, այն է՝ «Կենցաղային աղբի տեսակավորման կետերի ընդլայնում, թափոնների վերամշակման ապահովման մշակույթի ձևավորում», հետ հարկ ենք</p>	<p>Կենցաղային թափոնների տեսակավորման նպատակով Երևան համայնքի 2023 բյուջեում թվականի նախատեսված է <<Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

	<p>կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>համարում նշել հետևյալը: Չնայած այն բանին, որ Երևան քաղաքում բարելավվել են սանիտարական մաքրման աշխատանքները, այդուհանդերձ չի կատարվում աղբի հավաքման համակարգված աշխատանք և առայժմ չի նախաձեռնվել դրա վերամշակման լուրջ գործընթաց: Այդ կապակցությամբ առաջարկում ենք Երևան քաղաքի բոլոր բակերում տեղադրել աղբի հավաքման տեսակավոր աղբարկղներ տարբեր գույներով, որպեսզի հեշտանա հետագայում դրանց վերամշակումը: Շտապ կարգով մշակել և իրականացնել աղբի վերամշակման այնպիսի ծրագիր, ինչը կնպաստի ինչպես ջերմային էներգիայի արտադրությանը, այնպես էլ աղբի թափոններից ժողովրդական սպառման տարբեր առարկաների արտադրության կազմակերպմանը, որի արդյունքում Երևան քաղաքում կստեղծվեն նոր աշխատատեղեր: Հետևաբար առաջարկում ենք Ծրագրի «Բնապահպանություն» բաժնում լրացնել վերոհիշյալ հիմնախնդիրները և դրանց համապատասխան Ծրագրում նախատեսել միջոցառումներ, իսկ բյուջեում՝ ծախսեր:</p>	<p>ընդհանուր մարտահրավերների շուրջ դրամաշնորհային ծրագիր՝ 1,445,193.3 հազ. դրամի չափով:</p>	
5	<p>Մովսես Արիստակեսյան «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p>	<p>Համամիտ լինելով մայրաքաղաքում կարիքավոր, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, աղքատ, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, գոհված ազատամարտիկների ընտանիքներին,</p>	<p>Մոցիալական դասին պատկանող «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» ծրագրի շրջանակներում հասարակական</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

	<p>(22.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց համար սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրերի իրագործման ընթացքում առաջացած հիմնախնդիրների հետ, այդուհանդերձ կարծում ենք, որ Ծրագրի «Երեխաների և սոցիալական պաշտպանություն» բաժնում նշված հիմնախնդիրներն ամբողջական չեն, իսկ դրանցով նախատեսված միջոցառումները հասցեական եւ արդյունավետ չեն: Այսպես, ի տարբերություն նախորդ տարիների, Ծրագրում որպես հիմնախնդիր չեն ներկայացված պալեատիվ (ամոքիչ) բժշկության և համապատասխան ծառայությունների մատուցման խնդիրները: Դրանք պարզապես բացակայում են ինչպես այս, այնպես էլ՝ «Առողջապահություն» բաժններից, մինչդեռ նախորդ տարիների ծրագրերում նախատեսված էին շարունակել տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված փորձարարական ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո տուն-ինտերնատների միջոցով, նաև՝ պետություն-ՀԿ-համայնք համագործակցությամբ կազմակերպված ցերեկային խնամքի կենտրոններում: Փոխանակ ամփոփվելին այդ ծրագրերի արդյունքները և ընդլայնվելին դրանք,</p>	<p>կազմակերպություններին անդամակցությունը իրականացվում է ապահովելով բարձր հաշվետվողականություն, մասնավորապես անհրաժեշտության դեպքում Երևանի քաղաքապետարանը պատրաստակամ է տրամադրել յուրաքանչյուր անդամակցության մասով ֆինանսական միջոցների ծախսման և ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն:</p>	
--	--	--	---	--

		<p>մոռացության են մատնված այդ ծրագրերի շահառուները՝ ծանր հիվանդություններով տառապող և մշտական հոգածության կարիք ունեցող հազարավոր անձինք, այդ թվում՝ հատկապես Այցհայմերի հիվանդությամբ տառապող բուժառուները: Հետևաբար առաջարկում ենք Ծրագրի «Երեխաների և սոցիալական պաշտպանություն» բաժնում լրացնել պալեատիվ օգնություն հայցող միայնակ, անժառանգ հաշմանդամ ծերերին այդ ծառայությունների մեջ ընդգրկելու, նրանց նկատմամբ շուրջօրյա խնամք ապահովելու ուղղությամբ հիմնախնդիրը և դրան համապատասխան Ծրագրում նախատեսել միջոցառումներ, իսկ բյուջեում՝ ծախսեր: Միաժամանակ մեզ խիստ անորոշ են թվում Ծրագրի «Երեխաների և սոցիալական պաշտպանություն» բաժնում նշված 2023 թ. իրականացվող ծրագրերից 7-րդը՝ «Հասարակական կազմակերպություններին աջակցություն», ինչը ըստ մեզ իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Հետևապես առաջարկում ենք ավելի հստակեցնել այդ ծրագիրը՝ նշելով ծրագրի արդյունքային ցուցանիշները, հասարակական կազմակերպություններին ներգրավելու ընթացակարգերը:</p>		
6	Մովսես Արիստակեսյան	Ծրագրի գերակայություններ են համարվել. →	Ինչպես տեղեկացրեցիք 1. կետով՝	Նախագծում

<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը, համակարգի անվտանգության նկատմամբ դրանց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացումը, – Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը, – Բնակելի ֆոնդի վերանորոգումը և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը և ըստ այդմ Ծրագրի «Կոմունալ տնտեսություն» բաժնում սահմանվել են համապատասխան հիմնախնդիրներ և միջոցառումներ: Սակայն դրանց, ինչպես նաև 2023 թ. Բյուջեի նախագծի ու Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նախատեսված միոցառումների ծրագրի մեջ չհայտնաբերեցինք սույն փաստաթղթի 1-ին մասում ներկայացված 1 և 3 կետերում ներկայացված խնդիրների լուծումը: Ըստ այդմ կրկին առաջարկում ենք Ծրագրի և Բյուջեի նախագծի մեջ մտցնել միջոցառումներ ուղղված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի. 1. Բ-2 թաղամասը մատակարարող բարձրավոլտ մալուխի</p>	<p>բակային բարեկարգման մասով պատվիրված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության պես այն կներառվի Երևան համայնքի 2023 թվականի բյուջեում, իսկ մնացած առաջարկվող աշխատանքների մասով, ինչպիսիք են՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրումը կամ ավտոկայանատեղիի կառուցումը, շենքեր մուտք գործող ավտոճանապարհի շուրջօրյա լուսավորությունը, Երևան համայնքի 2023 թվականի բյուջեով համապատասխան ծրագրեր նախատեսված չեն:</p>	<p>փոփոխություն և չի կատարվել</p>
--	--	--	---

փոխարինումը նորով, ինչի պատճառով ասիական երկար տարիներ մեծ հաճախականությամբ ըդհատվում են թաղամասի շենքերի էներգամատակարարումը՝ լուրջ նյութական վնասներ հասցնելով թաղամասի բնակիչներին ու տնտեսվարող սուբյեկտներին, 2. վերանորոգել Ա.Բաբաջանյան փողոցի 91,93,95, 99 շենքերի մուտքերը, որոնք 1983 թ. շահագործումից հետո առ այսօր չեն եթարկվել վերանորոգման և լուրջ վտանգ են ներկայացնում քաղաքացիներին կյանքին ու առողջությանը, 3. քննարկել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի ընդհանուր վերանորոգման խնդիրը՝ էներգախնայող համակարգերի ներդրմամբ, կամ դրանց՝ էլեկտրամատակարարման խնդրի լուծումը՝ դրանց տանիքներին արևային ֆոտովոլտային սարքավորումների տեղադրման ու շենքերի ջերմամեկուսացման միջոցով, 4. վերանորոգել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի միջակայքում համայնքի սեփականությունը համարվող մարգաղաշտը և դրա շրջակայքը՝ դրա շրջապատում բարեկարգելով բակի տարածքը և տեղադրելով նոր մանկական ատրակցիոններ ու մարզական գույք, 5. ապահովել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի շրջակայքի և հատկապես՝ դեպի այդ շենքերը մուտք գործող ավտոճանապարհի շուրջօրյա լուսավորությունը, 6. քննարկել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի

		<p>միջակայքում համայնքի սեփականությունը համարվող մարզադաշտի տակը ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցելու խնդիրը, ինչին համաֆինանսավորմամբ կմասնակցեն նաև բակի բնակիչները,</p>		
7	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Ծրագրի «Շինարարություն և բարեկարգում» բաժնում նախատեսված են աշխատանքներ կատարել մայրաքաղաքի հեղեղատների հիմնանորոգման ուղղությամբ: Մակայն ցավոք դրանց մասին մանրամասն տեղեկատվություն չկա, թե որտեղ և երբ են կատարվելու այդ աշխատանքները և Երևան քաղաքի բյուջեում նախատեսված են արդյոք ծախսեր քաղաքի տարածքում հեղեղատարների մաքրման, վերանորոգման եւ կապիտալ շինարարության համար: Եթե ոչ, ապա ով է պատասխանատու դրանց, հատկապես դրանց համակարգերի աշխատանքի համար, որոնց մասին ահա 4-5 տարի է բարձրաձայնում ենք ինչպես Երևանի քաղաքապետարանում, այնպես էլ «ՎեոլիաՋուր» ՓԲԸ-ում, որի անմիջական պարտականությունն է այդ լուրջ հիմնախնդրի լուծումը: Ցավոք նա տարիներ շարունակ չի զբաղվում այդ խնդրով՝ չկատարելով ՀՀ կառավարության հետ կնքած վարձակալության պայմանագրի պարտավորությունները՝ փոխարենը ամեն տարի դիմում է ջրամատակարարման և շրահեռացման</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով կոյուղագծերի և հեղեղատարների վերանորոգման և հիմնանորոգման համար նախատեսված է 213,000.0 հազ. դրամ, որի հասցեականությունը ներկայացված է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ուղերձի նախագծում: Հաշվի առնելով խնդրի տարածված բնույթը, վերոնշյալ ծրագիրը իրականացվում է ըստ հասցեների հրատապության և շարունակական սկզբունքով՝ հնարավոր ֆինանսական միջոցների հատկացման շրջանակներում:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>սակագների բարձրացման պահանջով: Նշված խնդիրը լուրջ է հատկապես Երևան քաղաքի Հարավ-արևմտյան Բ-2 թաղամասի 89-99 շենոների բակում, ՀԱ Բ-2 թաղամասի 148 շենքի դիմաց, որոնց մասին բազմիցս բարձրաձայնել ենք, սակայն ձայն բարբառո անապատի: Ըստ այդմ առաջարկում ենք Ծրագրում նախատեսել միջոցառումներ և Բյուջեի նախագծում նախատեսել միջոցներ վերոհիշյալ հիմնախնդիրը 2023 թ. ընթացքում լուծելու ուղղությամբ:</p>		
8	<p>Մովսես Արիստակեսյան «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ (23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Լուրջ հիմնախնդիրներ են սահմանվել Ծրագրի «Տրանսպորտ բաժնում»: Սակայն դրանք սպառիչ չեն և ամբողջապես չեն կարող լուծել մայրաքաղաքում այդ ոլորտում առկա լուրջ բացթողումները: Այդ բացթողումները հատկապես վերաբերում են հետևյալ հիմնախնդիրներին, որոնք առաջացնում են նաև հետևյալ հարցերը. 1) Առ այսօր լուծված չէ Երևան քաղաքում վճարովի կայանատեղի անվանվող այսպես կոչված «կարմիր գծերի» համար վճարվող ապօրինի պարտադիր վճարների հիմնախնդիրը: Թեև մեր բազմաթիվ ահազանգերի ու առաջարկությունների հիման վրա դրանց կիրառումը սահմանափակվեց միայն Երևան քաղաքի 2 վարչական շրջանի տարածքով՝ Արաբկիր և կենտրոն, սակայն դա խնդրի լուծում չէ: Բյուջեի նախագծով</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագծով «Փարքինգ սիթի սերվիս» ՄՊԸ-ի վարկային պարտավորությունների մարման մասով միջոցներ չեն նախատեսվում:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

նախատեսված է, որ այդ նպատակի համար հավաքագրվելու է 1.2 մլրդ դրամ, ինչը կազմում է տեղական վճարների 20.1 տոկոսը: Ընդ որում, անհասկանալի է, թե այդ գումարը ավելացել է արդյոք 2020, 2021, 2022 թթ. համեմատությամբ, թե ոչ: Նախատեսված է, որ վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները 2023 թ. կկազմեն 575.7 մլն դրամ կամ տեղական վճարների 9.6 տոկոսը: Անհայտ է մնում, թե այդ եկամուտների որ մասն են կազմելու ապօրինի «կարմիր գծերի» նախատեսված իրավախախտումների համար գանձվող ապօրինի տուգանքները, դրանց ծավալի հարաշարժը (դինամիկան), որոնք մենք գնահատում ենք ապօրինի և ոչ իրավաչափ: Երևան քաղաքի բյուջեի վերոհիշյալ 2 խումբ եկամուտները կազմում են 1.786 մլրդ դրամ կամ տեղական վճարների մոտ 30.0 տոկոսը կամ էլ Երևանի բյուջետային ողջ մուտքերի 1.9 տոկոսը: Հետևապես կարծում ենք, որ ապօրինի «կարմիր գծերի» համար գանձվող գումարների ու դրանց խախտման համար գանձվող ապօրինի տուգանքների վերացումը մեծ վնաս չի լինի Երևան քաղաքի բյուջեի համար: Մանավանդ որ այդ հսկայական գումարների սոսկ մի մասն է՝ 412.8 մլն դրամը կամ էլ ապօրինի կայանտեղիների համար գանձվող գումարների

սուկ 34.1 տոկոսը, օգտագործվում այդ ապօրինի կարգավորման համար ՀՀ կառավարության 01.12.2016 թ. թիվ 1214-Ա ն Երևան քաղաքի ավագանու 21.12.2016 թ. թիվ 655-Ա որոշումներով «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման և Ազատության հրապարակի ստորգետնյա կայանտեղիի պահպանման համար: Ընդ որում, այդ ծախսերի մեջ նախատեսված են նոր լուսանկարահանող սարքերի ձեռք բերում, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենքով սահմանափակվել է այդ ծառայության մատուցումը Երևան քաղաքում ընդամենը 2 վարչական շրջանների տարածքներով: 2) Մարվել է ն արդյոք Երևանի բյուջեի պարտավորությունները «Փարքինգ սերվիս» ՍՊԸ-ին վարկային պարտավորությունների համար, 3) Ա՞նց է կացվել արդյոք անկախ աուդիտ «Փարքինգ սերվիս» ՍՊԸ-ի նախընթաց գործունեության վերաբերյալ եւ պատրաստվե՞լ է արդյոք հանցագործության մասին հաղորդում դատախազությանը, 4) Վերացվելու է՞ն արդյոք ապօրինի «կարմիր գծերը»: Փաստորեն Երևան քաղաքում վճարովի ավտոկայանտեղիին բնորոշ ինժեներական կառույցները մի քանիսն են՝ 4-5-ը եւ դրանց պետք է վերաբերի օրենսդրական կարգավորումները: Այսպես կոչված «կարմիր գծերն» իրենց բնույթով վճարովի կայանտեղի չեն, պարզապես ապօրինաբար զբաղեցրել են

երթեւեկելի մասի 1-ին գծերը, ինչի համար էլ գանձվում են ապօրինի տեղական վճարները: Հետևապես առաջարկվում է, որպեսզի խնդիրը կարգավորելու նպատակով ընդունվեն նոր օրինագծեր, որոնք ուղղված կլինեն Երևան քաղաքապետի ու ավագանու խնդրո առարկա ապօրինի որոշումները չեղյալ համարելուն, 5) Վերացվելու են արդյոք ապօրինի «կարմիր գծերում» կայանելու համար իբր իրավախախտումների մասին ապօրին, հակասահմանադրական որոշումների կայացումն ու ըստ այդմ քաղաքացիներին ապօրինաբար տուգանելու արատավոր գործընթացը, 6) թեև Ծրագրով նախատեսված է, որ Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի արդիականացման աշխատանքների և բարեփոխումների շրջանակներում պլանավորվում է նոր 2 ստորգետնյա վճարովի ավտոկայանատեղերի կառուցում, սակայն մեզ նահայտ է, թե Երևանի բյուջեում որքան են կազմելու իրապես վճարովի կայանատեղիներ կառուցելու ուղղությամբ ծախսերը եւ ո՞րտեղ են նախատեսվելու դրանք կառուցել: Մեր կարծիքով դրանք պետք է կառուցել Երևանի քաղաքապետարանի դիմացի, Ստ.Շահումյանի անվան հրապարակների, ՀՀ կառավարության 3-րդ շենքի դիմացի այգու տարածքներում և այլն, որոնք թույլ կտան թերթնացնելու Երևան քաղաքի փողոցների ու

		<p>հրապարակների ծանրաբեռնվածությունը ավտոմեքենաներով, ինչպես նաև՝ երևեկության խցանումները: Այդ նպատակով անհրաժեշտ է, որպեսզի հիմնովին վերանյավեն կառուցապատման նորմաները, որոնցում պետք է պարտադիր կերպով նախատեսվեն բոլոր հանրային շենքերում ավտակայանտեղիների կառուցում, 7) Երևան քաղաքում խնդրահարույց է մնում հաշմանդամ վարորդների համար ավտոկայանտեղիներում անվճար տարածքներ ամրագրելու հրամայականը: Այդպիսիք պարզապես չկան: Այդ հանգամանքը հակասում է ՀՀ միջազգային պարտավորություններին՝ հաշմանդամների նկատմամբ իրկանացվող քաղաքականության առումով: Ի՞նչպիսի ծրագրեր կան այդ ուղղությամբ, 8) թեև Ծրագրով նախատեսված է Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցում՝ «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ (Քրիստափորի փողոցի մոտակայքում), սակայն մեզ թվում է, որ այդ կայարանի կառուցումը էապես չի թեթևացնի Երևան քաղաքի տրանսպորտային երթևեկության խցանումները: Հարց է առաջանում, թե ինչու դրա փոխարեն Ծրագրում չի նախատեսված Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում մետրոպոլիտենի կայարանի կառուցումը, ինչը նախատեսված էր Երևանի զարգացման 2018-2022 թթ ծրագրում: Դրա կառուցումը էապես</p>	
--	--	--	--

կնպաստեր Երևանի բազմահազար վարչական շրջանի բնակիչների տրանսպորտայի հոգսը՝ դեպի Երևաի կենտրոն և մյուս վարչական շրջաններ հասնելու ուղղությամբ, կնպաստեր Երևան քաղաքի Իսակովի պողոտայի, Հրազդան կամրջի, Սեբաստիա փողոցի խցանումներ վերացմանը, դրանով կնպաստեր մայրաքաղաքի օդի աղտոտվածության մակարդակի նվազեցմանը, կթեթևացներ ուղևորաշրջանառությունն ու բեռնաշրջանառությունը: Ավելին, այդ շինարարությունը կլիներ ավելի հեշտ՝ տեղանքի հարմարության առումով և կարելի էր գուգակցել Հյուսիս-Հարավ մայրուղու Շիրակի փողոց-Բաբաջանյան փողոց հատվածի վերջերեսը իրականացված շինարարության հետ, օգտագործելով նաև Երևանի նորակառույց 5-րդ կամրջի հնարավորությունները: Այստեղից էլ առաջարկում ենք Ծրագրով Քրիստափորի փողոցի մոտակայքում նախատեսված Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի նախագծման ու կառուցման աշխատանքները փոխարինել Մալաթիա-Սեբաստիա համայնքում նոր կայարանի նախագծման ու կառուցման աշխատանքներով, 9) Թեև Ծրագրով նախատեսված են Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության կարգավորման և անվտանգության ապահովման նպատակով մի շարք միջոցառումներ, այդուհանդերձ դրանք

բավարար չեն: Երևան քաղաքում այդ հիմնախնդրի լուծումը բախվում է երկու գերատեսչությունների՝ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ոստիկանության գերատեսչական շահերի պայքարին, ինչ արդյունքում չիրացված են մնում ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքները՝ կյանքի ու առողջության պահպանման, անվտանգ երթևեկության ապահովման ուղղությամբ, և դրա հետևանքով նրանք կրում են լուրջ նյութական և որ նյութական՝ բարոյական, վնասներ: Այդ մասին փաստերից մեկի մասին նշել եմ սույն փաստաթղթի 1-ին մասի 7-րդ կետի վերջին պարբերությունում: Դրա հետ մեկտեղ չլուծված են մնում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևյալ իրավակարգավորումների պատշաճ իրագործումը, ինչը պատճառ է դառնում մայրաքաղաքում բազմաթիվ ճանապարհատրանսպորտային վթարների, Երևան քաղաքում երթևեկության փոփոխությունների մասին ոչ բոլոր դեպքերում են հայտարարվում զանգվածային լրատվության միջոցներով և եթե անգամ հայտարարվում են, ապա դրանք լինում են միանգամյ և ոչ թե որոշակի պարբերականաւոյթմաբ, որպէսզի ՀՀ բոլոր քաղաքացիները տեղեկացված լինեն դրանց մասին: Օրինակ, Հյուսի-Հարավ մայրուղու Շիրակ-Բաբաջանյան փողոցների

շինարարության ընթացքում Բաբաջանյան-Անդրանիկ փողոցների հատվածում երթևեկության փոփոխության մասին իրազեկում ՋԼՄ-ներով չեղավ: Ավելին, առ այսօր այդ հատվածում Անդրանիկ փողոցի վրա տեղադրված են իրար հակասող ճանապարհային նշաններ, որոնք ոչ միայն նպաստում են ՃՏՊ-ների քանակի ավելացմանը, այլև հիմք են հանդիսանում ՃՏՊ-ների ժամանակ ՀՀ ոստիկանության մարմինների կողմից ապօրինի որոշումներ կայացնելու համար: Դրա արդյունքում ՀՀ քաղաքացիները ընկնում են բարդագույն խնդրի մեջ՝ իրենց վթարված ավտոմեքենաների համար ապահավագրական հատուցումներ ստանալու հարցում, առ այսօր Երևանի քաղաքապետը չի հաստատել մայրաքաղաքում վարդի թեկնածուների կողմից գործնական պարապմունքներ անցկացնելու համար արգելված կամ էլ թույլատրելի փողոցների ցանկը, ինչը պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ: Արդյունքում վարորդի թեկնածուները ՀՀ ոստիկանության կողմից ենթարկվում են ապօրինի տուգանքների, → մայրաքաղաի մի շարք բանուկ մասերում չկան կառուցված անվտանգ անցումներ, որոնք թույլ կտային քաղաքացիների անվտանգ հատել այդ ճանապարհները, → մայրաքաղաքի շատ մայթեր զբաղված են տարաբնույթ ապօրինի առևտրային կետերով և կառույցներով, որոնք խոչընդոտում

		<p>են հետիոտներ անարգել երթնելը, → առ այսօր գործուն պատասխանատվության միջոցներ չեն մշակած և չեն կիրառվում իրապատասխան հետիոտների նկատմամբ, ովքեր խախտելով ճանապարհային անվտանգության կանոնները՝ ակամ վարորդներին դարձնում են իրավախախտներ և հանցագործներ, ինչու՞մ նրաք շատ հաճախ մեղավոր չեն → և այլն: Ըստ այդմ առաջարկում ենք ինչպես Ծրագրում, այնպես էլ ՀՀ օրենսդրության մեջ նախատեսել համապատասխան փոփոխություններ, իսկ Բյուջեի նախագծում՝ համապատասխան միջոցներ՝ վերանշյալ միջոցառումները կենսագործելու նպատակով:</p>		
9	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Նախագծում այդպես էլ չկարողացանք գտնել ՔՀԿ-ների հետ համագործակցության և կառուցողական երկխոսության հստակ ծրագրեր: Այդ կապակցությամբ զարմանք են առաջացնում բյուջեի նախագծով նախատեսված հետևյալ ծախսային ուղղությունները. → Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին, որով նախատեսվել է ավելի քան 500.0 մլն դրամի ծախս՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով <<Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին>> ծրագիրը իրականացվում է ոլորտային մասնագետների կողմից՝ ըստ առաջարկվող ծրագրերի գնահատման և եզրակացության տրամադրման, իսկ ֆինանսական միջոցների հատկացումը՝ յուրաքանչյուր ծրագրի մասով, իրականացվում է Երևանի քաղաքապետի համապատասխան</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

	<p>Սակայն անհայտ է մնում, թե ինչ մեխանիզմներով են այդ միջոցները հատկացվելու և ում՝ չկա հստակություն, Աջակցություն հասարակական կազմակերպություններին ծրագրով նախատեսվել է շուրջ 77.5 մլն դրամի ծախս՝ տարբեր սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով: Հարց է առաջանում, թե ո՞ր օրենքների համապատասխան և թե ի՞նչու Երևանի քաղաքապետարանը պետք է մասնակցի տարբեր հասարակական կազմակերպություններին: Այդ մասին ոչինչ չի ասված ինչպես Ծրագրում, այնպես էլ բյուջետային ուղերձում: Հետևապես մեզ մոտ լուրջ կասկածներ են հարուցում ավելի քան 0.5 մլրդ դրամի ծախսերը, որոնք իբր ուղղված են լինելու հասարակական կազմակերպությունների աջակցությանը: Այդ կապակցությամբ առաջարկում ենք Երևանի քաղաքապետարանի և քաղաքացիական հասարակության միջև կառուցողական երկխոսություն հաստատելու նպատակով այդ ֆինանսական միջոցներն ուղղել հատկապես Երևան քաղաքի ծրագրերի և բյուջեի մոնիթորինգին ու վերահսկմանը՝ ՔՀԿ-ների ուժերով: Այդ կապակցությամբ մեր կազմակերպությունը կարող է տրամադրել իր փորձառությունը:</p>	<p>կարգադրության հիմքով:</p>	
--	---	------------------------------	--

10	<p>Մովսես Արիստակեսյան</p> <p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>17. Երևան քաղաքի բյուջեն ի՞նչու չի կազմված ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ: Այս մասին մենք բազմիցս բարձրաձայնել ենք նախկին հանրային քննարկումների ժամանակ: Փաստորեն Երևանի քաղաքապետարանը խուսափում է կատարել բյուջետային գործընթացի կարգավորման, պետական ու համայնքային բյուջեները ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ կազմելու մասին հետևյալ փաստաթղթերի պահանջները, ինչը էապես դժվարեցնելու է իրականացնել այդ ծրագրերի մոնիթորինգը և գնահատելու դրանց կատարման արդյունքներն ու ներառականությունը. ՀՀ վարչապետի 2020 թվ հունվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 5-Ս որոշումը , ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. հունիսի 23-ի թիվ 311-Ս հարմանը «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին», ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում տեղադրված համապատասխան մեթոդական ուղեցույցները , → «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «ՀՀ տեղական</p>	<p>Սկզբունքորեն համաձայն ենք ներկայիս ծախսային բյուջեի մոդելից ծրագրային բյուջետավորմանը անցնելու գաղափարին, սակայն հարկ է արձանագրել, որ Երևան համայնքը ունենալով բավականին խոշոր սեփական ծախսի ցուցանիշ և բազմաշերտ կառուցվածք, էապես տարբերվում է ՀՀ մյուս համայնքներից, որտեղ ըստ էության ծախսային մասում տեղ են գտնում պետության կողմից պատվիրակված կամ այլ ֆինանսական գործիքներով հատկացվող ծրագրերը , որոնք արդեն պետական հատվածի կողմից բյուջետավորված են լինում ծրագրային ձևաչափով: Ուստի Երևանի քաղաքապետարանը իհարկե ներկայումս ձեռնարկում է ինտենսիվ քայլեր՝ համագործակցելով նաև ՀՀ ֆինանսների նախարարության հետ, սակայն ելնելով վերը նշվածի տրամաբանությունից ծրագրային բյուջետավորման անցումը կպահանջի որոշակի ժամանակահատված և կլինի փուլային: Միաժամանակ հարկ էմ</p>	<p>Նախագծում փոփոխություն և չի կատարվել</p>
----	--	---	--	---

		<p>ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները, – և այլ իրավական նորմատիվ ակտեր: Այս առումով հարկ է հաշվի առնել հետևյալ հանգամանքը, որ. – պետական բյուջեն և համայնքների բյուջեները կազմելով ՀՀ համախմբված բյուջեն, պետք է կազմվեն նույն մեթոդաբանությամբ, – Ծրագրային ձևաչափով բյուջետավորման նպատակն է պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, բյուջետային գործընթացում թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների ապահովումը:</p>	<p>համարում նշել, որ Ձեր կողմից ներկայացված ՀՀ վարչապետի 2020 թվ հունվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 5-Ա որոշումը վերաբերվում է միայն պետական բյուջեի գործընթացը սկսելուն և չի տարածվում համայնքների ինքնուրույն բյուջետային գործընթացը իրականացնելու վրա, իսկ ՀՀ Ֆինանսների նախարարի 2017 թ. հունիսի 23-ի թիվ 311-Ա հարմանով սահմանված մեթոդաբանությունը տարածվում է միայն պետական բյուջեի նախագծման վրա: Ներկայումս ՀՀ համայնքների բյուջեների նախագծման վերաբերյալ գործում է ՀՀ Ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի 730-Ն հրամանը, որը նորմավորում է բյուջետային օրինակելի ձևաչափերը և դրանց լրացման մեթոդաբանությունը ՀՀ համայնքներում:</p>	
11	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p>	<p>Նախորդ նամակի 12-րդ մասի 8-րդ ենթակետում հարցադրում էինք կատարել Ծրագրով</p>	<p>Երևան համայնքի 2023 թվականի բյուջեով նախատեսված է</p>	<p>Նախագծում փոփոխություն</p>

	<p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>նախատեսված Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ (Քրիստափորի փողոցի մոտակայքում), նոր կայարանի կառուցման աննպատակահարմարության մասին նշելով, որ ըստ մեզ այդ կայարանի կառուցումը էապես չի թեթևացնի Երևան քաղաքի տրանսպորտային երթևեկության խցանումները: Նշել էինք նաև, թե ինչու դրա փոխարեն Ծրագրում չի նախատեսված Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում մետրոպոլիտենի կայարանի կառուցումը, ինչը նախատեսված էր Երևանի զարգացման 2018-2022 թթ ծրագրում, և ինչը էապես կնպաստեր Երևանի բազմահազար վարչական շրջանի բնակիչների տրանսպորտային հոգսը՝ դեպի Երևանի կենտրոն և մյուս վարչական շրջաններ հասնելու ուղղությամբ, կնպաստեր Երևան քաղաքի Իսակովի պողոտայի, Հրազդան կամրջի, Սեբաստիա փողոցի խցանումներ վերացմանը, դրանով կնպաստեր մայրաքաղաքի օդի աղտոտվածության մակարդակի նվազեցմանը, կթեթևացներ ուղևորաշրջանառությունն ու բեռնաշրջանառությունը:</p> <p>Այս կապակցությամբ ցանկանում ենք պարզել, թե ինչու այդ կայարանի նախագծային, նախահաշվային աշխատանքների ֆինանսավորման վերաբերյալ ոչ մի խոսք չկա Բյուջեի նախագծի ոչ բյուջետային ուղերձում և ոչ</p>	<p>Աջափնայկ կայարանի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փուլային ձեռքբերման համար ֆինանսական միջոցներ, որի ձեռքբերումը մեկնարկել է 2022 թավականի բյուջետային տարում, իսկ ավարտը նախատեսվել է 2023 թվականին:</p>	<p>ն չի կատարվել</p>
--	---	---	---	----------------------

Էլ դրա հավելվածներում:
Ըստ մեզ այդ կայարանի կառուցման նախաձեռնությունը նպատակ ունի բավարարելու որոշակի անձանց բիզնես շահերը և բոլորովին էլ չի նպաստելու Ծրագրում նախանշված նպատակներին՝ այն է, Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի մետրոպոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման այլընտրանքային հնարավորություն, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում (շատ անհասկանալի հիմնավորում), մարդկային հոսքերի կառավարում, հասանելիության հեշտացում, մետրոյի զարգացում, շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտ և շահութաբերություն: Կարելի է եզրակացնել, որ ինչպես Երևանի ավրադացի մի բլոկի պատահական փլուզումը, այնպես էլ «Սուրմալու» տոնավաճառի շենքի պատահական պայթեցումը այս ծրագրի իրականացման փուլային նախընթաց գործողություններն էին և իրապես սպասարկում են միմիայն Ծրագրի նպատակադրումներից սուկ շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտի ստացմանն ու շահութաբերության բարձրացմանը, որի մենատերը հայտնի է հասարակությանը (մանավանդ որ Ծրագրում նշված է, որ այդ

		<p>միջոցառման ֆինանսավորման աղբյուրներն են Երևանի մետրոպոլիտենը, ՀՀ պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները): Դրանով պարզապես անտեսվում է Երևանի արժանապատիվ բազմահազար քաղաքացիների ազատ տեղաշարժի սահմանադրական իրավունքը:</p> <p>Հետևապես կրկին պնդում ենք, որ խիստ անհրաժեշտ է Ծրագրով Քրիստափորի փողոցի մոտակայքում նախատեսված Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի նախագծման ու կառուցման աշխատանքները փոխարինել Մալաթիա-Սեբաստիա համայնքում նոր կայարանի նախագծման ու կառուցման աշխատանքներով,</p>		
12	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Ծրագրի «Հանրակրթություն» բաժնի իրավիճակի նկարագրության մասում հստակորեն նշվել է կարևորագույն հիմնախնդիր, այն է՝ 2019թ.-ից Երևանի բոլոր դպրոցներում իրականացվող ներառական կրթության համատեքստում կարևորվում է դպրոցների ֆիզիկական պայմանների բարելավումը՝ հիմնանորոգման, վերանորոգման ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև մասնակի նորոգումների միջոցով հաշմանդամություն ունեցող սովորողների կարիքների հարմարեցմանը միտված աշխատանքները՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների, դասասենյակների</p>	<p>Հանրակրթական պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ պետական բյուջեից, մասնավորապես դրանց կապիտալ վերանորոգումները նախատեսվում և իրականացվում են պետական հատվածի կողմից:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>հարմարեցում և այլն: Ըստ այդմ այդ բաժնում նախատեսված է հիմնախնդիր. կրթական բարենպաստ ֆիզիկական միջավայրի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված պայմանների ձևավորման անհրաժեշտություն: Սակայն այդ հիմնախնդրի լուծման ուղղությամբ 2023 թ. նախատեսվող ծրագրերում ոչ մի միջոցառում նախատեսված չէ, բացառությամբ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման և/կամ քաղաքաշինության ծրագրերի շրջանակում Երևանի մի քանի պետական հանրակրթական դպրոցների հիմնանորոգման աշխատանքների:</p> <p>Ըստ մեր դիտարկումների և հարցախույզների այդ հիմնախնդիրը շատ սուր է Երևանի քաղաքի այն դպրոցներում, որոնք կառուցված են 50-60 տարի առաջ և չեն ենթարկվել հիմնանորոգման: Դրա հետևանքով նշված դպրոցների սանհանգույցները գտնվում են անմխիթար վիճակում (շատերը խցանված են և չեն գործում՝ փակ են), ինչի հետևանքով դպրոցներում վտանգված է մնում սանիտարա-հիգիենիկ իրավիճակը, անմատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչի արդյունքում էլ ոչ միայն այդ անձինք, այլև աշակերտներն ու ուսուցչական անձնակազմը առողջական խնդիրների բարդացման վտանգի առջև են</p>		
--	--	--	--	--

կանգնած:

Բացի դրանից, այդ հին շենքերում միջհարկային ծածկերը-հատակները բաղդադից են, որոնք տարիների ընթացքում մաշվածության պատճառով ճոճվում ու ճռռում են՝ վտանգելով աշակերտների ու ուսուցչական անձնակազմի կյանքն ու առողջությունը:

Լուրջ խնդիր է այդ դպրոցների շենքերում սպորտդահլիճների բացակայությունը կամ անհամապատասխանությունը սահմանված չափորոշիչներին: Արդյունքում ֆիզիկական կուլտուրայի դասաժամերը շատ հաճախ անց են կացվում դասասենյակներում:

Այդ դպրոցներից շատերում բացակայում են բնական գիտությունների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) գծով նորագույն սարքերով համալրված լաբորատորիաները, որոնք նպաստելով սովորողների կրթադաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև բնագիտական առարկաների նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելով այդ առարկաների նկատմամբ՝ հետագայում կնպաստեն երկրում բարձրագույն կրթությամբ այդպիսի մասնագետների պատրաստմանը, ինչի կարիքն ունի երկրի տնտեսությունը:

Հետևապես առաջարկում ենք.

- 1) Ծրագրի «Հանրակրթություն» բաժնի

«Դպրոցական ուրտի հիմնախնդիր» մասում
Լրացնել հետևյալ հիմնախնդիրները և ըստ այդմ
նախատեսել միջոցառումներ Ծրագրում և
համապատասխան ծախսեր Բյուջեում.

Լրացնել հետևյալ հիմնախնդիրները և ըստ այդմ
նախատեսել միջոցառումներ Ծրագրում և
համապատասխան ծախսեր Բյուջեում.

□ 50-60 տարի առաջ կառուցված Երևանի
քաղաքի դպրոցներում, որոնք չեն ենթարկվել
հիմնանորոգման, սանհանգույցների
վերանորոգում, դրանց հարմարեցում
հաշմանդամություն ունեցող անձանց,

□ 50-60 տարի առաջ կառուցված Երևանի
քաղաքի դպրոցներում, որոնք չեն ենթարկվել
հիմնանորոգման, միջհարկային բաղադրե
ծածկեր-հատակների փոխարինում
ժամանակակից տեխնոլոգիաներով և
շինարարական նորմերով միջհարկային ծածկերի,

□ 50-60 տարի առաջ կառուցված Երևանի
քաղաքի դպրոցներում, որոնք չեն ենթարկվել
հիմնանորոգման, ՀՀ օրենսդրությամբ սահմանված
չափորոշիչներին համապատասխան բնական
գիտությունների (ֆիզիկա, քիմիա,
կենսաբանություն) գծով նորագույն սարքերով
համալրված լաբորատորիաների ստեղծում
և/կամ գործողների համալրում:

2) Ծրագրի «Կենտրոն վարչական շրջանի
հիմնախնդիրներ» բաժնում չկա նախատեսված ոչ

մի հիմնախնդիր և ծրագիր վերոհիշյալ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Հետևապես առաջարկում ենք այդ բաժնում ի լրումն 15 հիմնախնդիրների լրացնել նոր հիմնախնդիր՝ հետևյալ բովանդակությամբ.

«16. 50-60 տարուց առաջ կառուցված և չհիմնանորոգված դպրոցների շենքերի հիմնանորոգում, դրանց համարեցում հաշմանդամություն ունեցող անձանց և մարզադահլիճների, սանհանգույցների, միջհարկային ծածկերի համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին»:

Այդ հիմնախնդրի շրջանակներում 2023 թ. Բյուջեում նախատեսել ծախսեր 1954 թ. կառուցված, հիմնանորոգման չենթարկված և վերհիշյալ հիմնախնդիրների լուծման սուր և հրատապ կարիք ունեցող Երևանի Ե.Չարենցի անվան թիվ 67 դպրոցի հիմնանորոգումը, որի շրջանակներում իրականացնել.

□ Դպրոցի սանհանգույցների համակարգի հիմնանորոգում,

□ Դպրոցի միջհարկային ծածկերի-հատակների փոխարինում ժամանակակից տեխնոլոգիաներով ծածկերի,

□ Նոր սպորտդահլիճի կառուցում, ինչի համար դպրոցի շենքի հարակից տարածքում կա համապատասխան տարածություն,

		<p>Ո Դպրոցի համալրում բնագիտական առարկաների նորագույն լաբորատորիաներով և/կամ առկա լաբորատորիաների համալրում նորագույն սարքավորումներով:</p>		
13		<p>Ծրագրի «Կոմունալ տնտեսություն» բաժնում սահմանվել են համապատասխան հիմնախնդիրներ և միջոցառումներ: Սակայն դրանց, ինչպես նաև 2023 թ. Բյուջեի նախագծի ու Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նախատեսված միջոցառումների ծրագրի մեջ չհայտնաբերեցինք մեր կողմից 4 տարի շարունակ ներկայացված խնդիրների լուծումը, որոնց գրավոր համաձայնություն էր տվել Երևանի քաղաքապետարանը: Ըստ այդմ կրկին առաջարկում ենք Ծրագրի և Բյուջեի նախագծի մեջ մտցնել միջոցառումներ ուղղված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի.</p> <p>Բ-2 թաղամասը մատակարարող բարձրավոլտ մալուխի փոխարինումը նորով, ինչի պատճառով ահա երկար տարիներ մեծ հաճախականությամբ ընդհատվում են թաղամասի շենքերի էներգամատակարարումը՝ լուրջ նյութական վնասներ հասցնելով թաղամասի բնակիչներին ու տնտեսավարող սուբյեկտներին,</p> <p>2) վերանորոգել Ա.Բաբաջանյան փողոցի</p>	<p>Ինչպես տեղեկացրեցիք 1. կետով՝ բակային բարեկարգման մասով պատվիրված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության պես այն կներառվի Երևան համայնքի 2023 թվականի բյուջեում, իսկ մնացած առաջարկվող աշխատանքների մասով, ինչպիսիք են՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրումը կամ ավտոկայանատեղիի կառուցումը, շենքեր մուտք գործող ավտոճանապարհի շուրջօրյա լուսավորությունը, Երևան համայնքի 2023 թվականի բյուջեով համապատասխան ծրագրեր նախատեսված չեն:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

91,93,95,99 շենքերի մուտքերը, որոնք 1983 թ. շահագործումից հետո առ այսօր չեն եթարկվել վերանորոգման և լուրջ վտանգ են ներկայացնում քաղաքացիներին կյանքին ու առողջությանը,

3) քննարկել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի ընդհանուր վերանորոգման խնդիրը՝ էներգախնայող համակարգերի ներդրմամբ, կամ դրանց էլեկտրամատակարարման խնդրի լուծումը՝ դրանց տանիքներին արևային ֆոտովոլտային սարքավորումների տեղադրման ու շենքերի ջերմամեկուսացման միջոցով,

4) վերանորոգել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի միջակայքում համայնքի սեփականությունը համարվող մարզադաշտը և դրա շրջակայքը՝ դրա շրջապատում բարեկարգելով բակի տարածքը և տեղադրելով նոր մանկական ստրակցիոններ ու մարզական գույք,

5) ապահովել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի շրջակայքի և հատկապես՝ դեպի այդ շենքերը մուտք գործող ավտոճանապարհի շուրջօրյա լուսավորությունը,

6) քննարկել Ա.Բաբաջանյան փողոցի 89-99 շենքերի միջակայքում համայնքի սեփականությունը համարվող մարզադաշտի տակը ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցելու խնդիրը, ինչին համաֆինանսավորմամբ կմասնակցեն նաև բակի բնակիչները:

14	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Նույն կարգով մեզ կրկին անհասկանալի են թվում Ծրագրով նախատեսված Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ ծրագրի շրջանակներում ևս 15.0 մլն ՀՀ դրամի ծախսը: Կրկին հարց է առաջանում, թե ինչու Երևանի քաղաքացիները պետք է վճարեն իրավախախտ անձանց փոխարեն: Կարծում ենք, որ այդ խնդրի լուծման ուղղությամբ պետք է համապատասխան պատասխանատվության միջոցներ նախատեսվեն գործող օրենսդրության մեջ և այդ ծախսերը հանել Բյուջեի նախագծից: Այդ գումարները կարելի է օգտագործել ավելի նպատակային, օրինակի համար մեր կողմից առաջարկված Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 89-99 շենքերի, դրանց տարածքում կառուցված մարզադաշտի և շրջապատող տարածքի վերանորոգման համար:</p>	<p>Նշված ծրագիրը միտված է կանոնակարգելու Երևան քաղաքում իրականացվող առևտրային հարաբերությունները:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>
15	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Թեև Ծրագրով նախատեսված է Երևանում վճարովի 2 ավտոկայանտեղիների կառուցման աշխատանքներ, այդուհանդերձ Բյուջեում այդպիսի ծախսային հոդված չգտանք: Բյուջեատյին ուղերձում միայն նշված է, որ Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 431,370.0 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ս և Երևան քաղաքի ավագանու</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեում նախատեսվում են այն ծրագրերը, որոնց ֆինանսավորումը իրականացվելու է բացառապես Երևան համայնքի բյուջեից, իսկ հնարավոր համագործակցությունները մասնավոր հատվածի հետ կարող են տեղ գտնել Երևան քաղաքի</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար: Մինչդեռ կարծում ենք, որ այդպիսի ծառայությունների համար Բյուջեով նախատեսված ավելի քան 1.2 մլրդ դրամ մուտքերից կարելի է իրականացնել այդ իրապես քաղաքաշինական նորմերին համապատասխանող վճարովի ավտոկայանատեղիների կառուցումը Երևանի քաղաքապետարանի շենքի, Ստ.Շահումյանի արձանի, Կառավարական 3-րդ տան դիմացի հրապարակներում և այլն:</p>	<p>զարգացման ծրագրում:</p>	
<p>16</p>	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Մեզ խիստ խնդրահարույց են թվում Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսված շուրջ 377 մլն դրամի ծախսերը՝ այն դեպքում, երբ Երևանի բազմաթիվ բազմահարկ բնակելի շենքերում արդեն փակվել են աղբամուղները և այդտեղ կուտակված ր լքված աղբ վաղուց չկա: Ընդ որում, Բյուջեում նախատեսվել են ևս 2 ծախսային ծրագրեր՝ ուղղված աղբահանությանը և սանիտարական մաքրմանը: Դրանցից մեկով նախատեսված է իարականացնել Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագիրը, որին</p>	<p><<Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայությունները>> հանդիսանում է ընդամենը ծրագրի անվանումը, որի շրջանակում 2023 թվականին նախատեսվում է մեծամասամբ իրականացնել շինարարական և կոշտ աղբի տեղափոխում, իսկ ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է փաստացի կատարողականների սկզբունքով:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>հատկացվել է ավելի քան 50,6 մլն դրամ, իսկ եկրորդով՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր ծրագրով նախատեսվել է 4,6 մլրդ դրամ հատկացնել Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներին: Մեր կարծիքով Բյուջեի նախագծից պետք է հանվի Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ըստ մեզ կրկնվող և ըստ էության կոռուպցիոն ծրագիրը և դրա համար նախատեսված 377.0 մլն դրամն ուղղել առավել կարևոր ծրագրերի իրականացմանը:</p>		
17	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>Ողջունելով Ծրագրով շրջանակներում Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրի իրականացումը, գտնում ենք, որ դրա համար նախատեսված բյուջետային հատկացումները՝ 213,0 մլն մլն դրամ խիստ անբավարար են այդ հիմնախնդրի լուծման համար: մանավանդ, որ այդ ծախսերը 2022 թ. համեմատությամբ նախատեսվել 488.9 մլն դրամով կամ 69.7 տոկոսով պակաս: Առաջարկում ենք այդ բյուջետային ծախսերն ավելացնել ի հաշիվ նախորդ կետերում նախատեսված առաջարկություններով ծախսերի կրճատման և այդ ծրագրի շրջանակներում իրականացնել նաև Երեւան քաղաքի Հարավ-</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով կոյուղագծերի և հեղեղատարերի վերանորոգման և հիմնանորոգման համար նախատեսված է 213,000.0 հազ. դրամ, որի հասցեականությունը ներկայացված է Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի ուղերձի նախագծում: Հաշվի առնելով խնդրի տարածված բնույթը, վերոնշյալ ծրագիրը իրականացվում է ըստ հասցեների հրատապության և շարունակական սկզբունքով՝ հնարավոր ֆինանսական</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		արեւմտյան Բ-2 թաղամասի 89-99 շենտերի բակում, ՀԱ Բ-2 թաղամասի 148 շենքի դիմաց, որոնց մասին բազմիցս բարձրաձայնել ենք տարիներ շարունակ:	միջոցների հատկացման շրջանակներում:	
18	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	Մեզ անհասկանալի են թվում Ծրագրով նախատեսված Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսված 35,0 մլն դրամի ծախսը՝ 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 10,0 մլն դրամով կամ 40%-ով ավել է: Հարց է առաջանում, միթե չի կարելի այդ ծախսերն իրականացնել իրավախախտ կառուցապատողների հաշվին: Ինչու նրանց փոխարեն պետք է վճարեն Երևանի պարտաճանաչ հարկատուները: Կարծում ենք, որ այդ խնդրի լուծման ուղղությամբ պետք է համապատասխան պատասխանատվության միջոցներ նախատեսվեն գործող օրենսդրության մեջ և այդ ծախսերը հանել Բյուջեի նախագծից: Այդ գումարները կարելի է օգտագործել ավելի նպատակային, օրինակի համար մեր կողմից վերոհիշյալ կետերում նշված առաջարկությունների իրականացման համար: Հետևապես առաջարկում են այդ ծախսային հոդվածը հանել Բյուջեի նախագծից:	Իրավախախտ կառուցապատողները կատարած իրավախախտումների մասով իրականացնում են համապատասխան վճարումները Երևան համայնքի բյուջե, իսկ բյուջետային մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ բյուջետային ելքերի հետ՝ բացառությամբ նպատակային հատկացումների կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
19	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն</p>	Ողջունելով Ծրագրով Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսված ծախսերի	Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի թիվ 89-99 շենքերի հարակից	Նախագծում փոփոխություն չի

	<p>ուղարկվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>ավելացումը 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 640,2 մլն դրամով կամ 26,9%-ով և սահմանելով ավելի քան ել է 3,0 մլրդ դրամ, անհասկանալի է մնում, թե ինչու այդ ծրագրի շրջանակներում չեն նախատեսել նախորդիվ մեզ խոստացված միջոցառումների իրականացումը (Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի № 42/90239-22 պատասխան նամակում ասված է, որ. «Ի պատասխան Ձեր՝ 06.09.2022թ. հ. 625870 Երևանի քաղաքապետին հասցեագրված գրության, տեղեկացվում է, որ Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանի կողմից Բաբաջանյան փողոցի թիվ 89-99 շենքերի բակում գտնվող մարզադաշտի վերակառուցման համար պատվիրվել է կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր, իսկ բակի ասֆալտապատումը, սպորտ մարզական գույքի տեղադրումը և շենքերի մուտքերի վերանորոգումը կներառվեն վարչական շրջանի 2023թ. բարեկարգման ծրագրերում:»): Հետևապես առաջարկում ենք այդ միջոցառումները լրացնել Բյուջեի համապատասխան ծախսային ծրագրում:</p>	<p>տարածքների ասֆալտապատման, շենքերի մուտքերի վերանորոգման, ինչպես նաև բակում գտնվող մարզադաշտի վերանորոգման և սպորտ մարզական գույքի տեղադրման աշխատանքները համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում, կներառվեն 2023 թվականի բյուջեի համապատասխան ծրագրերի շրջանակներում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը գտնվում է գնման գործընթացում:</p>	<p>կատարվել</p>
<p>20</p>	<p>«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ</p> <p>(23.11.2022թ. առաջարկն ուղարկվել է Իրավական ակտերի</p>	<p>Ողջունելով Ծրագրով Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսված ծախսերը՝ ընդհանուր 628,7 մլն դրամի չափով, մեզ խիստ անհանգստացնում է այդ ծախսերի</p>	<p>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում վարչական շրջանների կողմից համապատասխան</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

	<p>նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով (e-draft.am))</p>	<p>պակասեցումը 2022 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 66,3 մլն դրամով: Կարծում ենք, որ այդ ծրագրին հատկացված միջոցները պետք է ավելացնել՝ ի հաշիվ մեր նախորդ առաջարկություններով նշված տնտեսումների և դրանք հատկապես հատկացնել վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար: Առաջարկում ենք նաև, որ այդ ծրագրի շրջանակներում ընդգրկել մեզ նախկինում խոստացված Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից Բաբաջանյան փողոցի թիվ 91, 93, 95 և 99 շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները:</p>	<p>ուսումնասիրությունների և անցկացված քննարկումների արդյունքում <<Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ>> ծրագրով նախատեսվել է 628,7 մլն դրամ, ընդ որում սույն ծրագիրը չի ենթադրում հատկացված ֆինանսական միջոցների մշտական աճ, իսկ Ձեր կողմից առաջարկվող հասցեների մասին նախորդ մի քանի կետերով անդրադարձ կատարվել է:</p>	
--	--	---	---	--

ԵՐԵՎԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ
 ԳՈՐԾԱՌԱՎԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
 (հազար դրամներով)

Տրոհի NIN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գրավածի NIN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		105,535,919.3	103,972,209.9	9,726,973.2
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		12,498,608.4	10,392,997.7	2,105,610.7
				այդ թվում՝				
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>		10,579,213.0	10,224,112.3	355,100.7
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		10,565,213.0	10,210,112.3	355,100.7
				այդ թվում՝				
				<u>1. Կառավարման մարմնի պահպանում</u>		10,333,900.1	10,142,412.3	191,487.8
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	7,823,330.8	7,823,330.8	-
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	200,000.0	200,000.0	-
				- Էներգետիկ ծառայություններ	4212	294,783.8	294,783.8	-
				- Կոմունալ ծառայություններ	4213	21,707.8	21,707.8	-
				- Կապի ծառայություններ	4214	217,095.7	217,095.7	-
				- Ապահովագրական ծախսեր	4215	58,009.0	58,009.0	-
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	48,000.0	48,000.0	-
				- Ներքին գործուղումներ	4221	5,000.0	5,000.0	-
				- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	60,000.0	60,000.0	-
				- Վարչական ծառայություններ	4231	12,705.0	12,705.0	-
				- Համակարգչային ծառայություններ	4232	52,670.8	52,670.8	-
				- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	41,000.0	41,000.0	-
				- Տեղեկատվական ծառայություններ	4234	16,334.0	16,334.0	-
				- Կառավարչական ծառայություններ	4235	64,000.0	64,000.0	-
				- Ներկայացուցչական ծախսեր	4237	69,145.5	69,145.5	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	65,883.8	65,883.8	-

Տրոհ MIN	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումար NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				- Մասնագիտական ծառայություններ	4241	14,916.9	14,916.9	-
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	271,892.5	271,892.5	-
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	64,387.4	64,387.4	-
				- Տրանսպորտային նյութեր	4264	218,380.0	218,380.0	-
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	30,793.2	30,793.2	-
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	16,640.0	16,640.0	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	297,206.4	297,206.4	-
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4638	28,400.0	28,400.0	-
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	58,500.0	58,500.0	-
				- Պարտադիր վճարներ	4823	10,629.7	10,629.7	-
				- Այլ ծախսեր	4861	81,000.0	81,000.0	-
				- Վարչական սարքավորումներ	5122	173,857.8	-	173,857.8
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	630.0	-	630.0
				- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	17,000.0	-	17,000.0
				<u>2. Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում</u>		231,312.9	67,700.0	163,612.9
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	67,700.0	67,700.0	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	78,612.9	-	78,612.9
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	85,000.0	-	85,000.0
2113	01	1	3	Արտաքին հարաբերություններ		14,000.0	14,000.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր</u>		14,000.0	14,000.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	14,000.0	14,000.0	-
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ		33,983.0	33,983.0	-
				որից՝				
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ		33,983.0	33,983.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Քաղաքացիական կազմության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>		33,983.0	33,983.0	-
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	29,238.3	29,238.3	-

Տրոհ MIN	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումար NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				- Էներգետիկ ծառայություններ	4212	3,205.3	3,205.3	-
				- Կոմունալ ծառայություններ	4213	100.0	100.0	-
				- Կապի ծառայություններ	4214	500.0	500.0	-
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	650.0	650.0	-
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	150.0	150.0	-
				- Պարտադիր վճարներ	4823	25.0	25.0	-
				- Այլ ծախսեր	4861	114.4	114.4	-
2150	01	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		1,755,510.0	5,000.0	1,750,510.0
				որից՝				
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		1,755,510.0	5,000.0	1,750,510.0
				այդ թվում՝				
				<u>1. Նախագծային աշխատանքներ</u>		1,361,510.0	5,000.0	1,356,510.0
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5,000.0	5,000.0	-
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1,356,510.0	-	1,356,510.0
				<u>2. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հրականացման վերլուծություն</u>		290,000.0	-	290,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	290,000.0	-	290,000.0
				<u>3. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում</u>		80,000.0	-	80,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	80,000.0	-	80,000.0
				<u>4. Պատմամշակութային նախագծերի հրականացում</u>		24,000.0	-	24,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	24,000.0	-	24,000.0
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		129,902.4	129,902.4	-
				որից՝				
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		129,902.4	129,902.4	-
				այդ թվում՝				
				<u>1. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաբննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ</u>		102,000.0	102,000.0	-
				- Պարտադիր վճարներ	4823	102,000.0	102,000.0	-

Տրոհ MIN	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումար NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<u>2. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ</u>		27,902.4	27,902.4	-
				- Մասնագիտական ծառայություններ	4241	8,000.0	8,000.0	-
				- Պարտադիր վճարներ	4823	19,902.4	19,902.4	-
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		144,932.0	34,932.0	110,000.0
				այդ թվում՝				
2220	02	2	0	<u>Քաղաքացիական պաշտպանություն</u>		122,502.0	12,502.0	110,000.0
				որից՝				
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն		122,502.0	12,502.0	110,000.0
				այդ թվում՝				
				<u>1. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն</u>		122,502.0	12,502.0	110,000.0
				- Կապի ծառայություններ	4214	1,602.0	1,602.0	-
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	4,000.0	4,000.0	-
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	6,900.0	6,900.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	80,000.0	-	80,000.0
				- Վարչական սարքավորումներ	5122	15,000.0	-	15,000.0
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	15,000.0	-	15,000.0
2250	02	5	0	<u>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</u>		22,430.0	22,430.0	-
				որից՝				
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		22,430.0	22,430.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն</u>		15,350.0	15,350.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15,350.0	15,350.0	-
				<u>2. Այրնորանքային աշխատանքային ծառայության իրականացում</u>		7,080.0	7,080.0	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	7,080.0	7,080.0	-
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		27,584,316.9	28,187,361.2	(603,044.3)
				այդ թվում՝				
2410	04	1	0	<u>Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ</u>		30,000.0	30,000.0	-
				որից՝				

Տրողի ՄԱՆ	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գրվածի ՄԱՆ	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ		30,000.0	30,000.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն</u>		15,000.0	15,000.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15,000.0	15,000.0	-
				<u>2. Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ</u>		15,000.0	15,000.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15,000.0	15,000.0	-
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն		189,858.0	-	189,858.0
				որից՝				
2424	04	2	4	Ոռոգում		189,858.0	-	189,858.0
				այդ թվում՝				
				<u>1. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում</u>		189,858.0	-	189,858.0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	165,808.0	-	165,808.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	24,050.0	-	24,050.0
2430	04	3	0	Վառելիք և էներգետիկա		4,962,233.4	2,876,989.8	2,085,243.6
				որից՝				
2435	04	3	5	Էլեկտրաէներգիա		4,962,233.4	2,876,989.8	2,085,243.6
				այդ թվում՝				
				<u>1. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագիր</u>		1,091,158.8	39,539.8	1,051,619.0
				- Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	39,539.8	39,539.8	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1,051,619.0	-	1,051,619.0
				<u>2. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային ծրագիր</u>		433,624.6	-	433,624.6
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	433,624.6	-	433,624.6
				<u>3. «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի համաֆինանսավորում</u>		600,000.0	-	600,000.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	600,000.0	-	600,000.0

Տրողի ՄԱՆ	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գործակալի ՄԱՆ	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<u>4. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ (պատվիրակված լիազորություններ)</u>		2,026,750.0	2,026,750.0	-
				- Այլ ծախսեր	4861	2,026,750.0	2,026,750.0	-
				<u>5. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		810,700.0	810,700.0	-
				- Այլ ծախսեր	4861	810,700.0	810,700.0	-
2450	04	5	0	Տրանսպորտ		25,755,210.4	23,419,349.7	2,335,860.7
				որից՝				
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ		21,339,907.6	20,079,075.0	1,260,832.6
				այդ թվում՝				
				<u>1. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում</u>		3,496,057.0	3,496,057.0	-
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	3,496,057.0	3,496,057.0	-
				<u>2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>		3,113,796.8	3,113,796.8	-
				- Այլ ծախսեր	4861	3,113,796.8	3,113,796.8	-
				<u>3. Եզրաքարերի վերանորոգում</u>		270,544.4	270,544.4	-
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	270,544.4	270,544.4	-
				<u>4. Հենապատերի վերանորոգում</u>		198,672.0	71,454.9	127,217.1
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	71,454.9	71,454.9	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	22,500.0	-	22,500.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	104,717.1	-	104,717.1
				<u>5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում</u>		15,000.0	-	15,000.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	15,000.0	-	15,000.0
				<u>6. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում</u>		195,000.0	90,000.0	105,000.0
				- Այլ ծախսեր	4861	90,000.0	90,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	105,000.0	-	105,000.0

Տրոհ ՄԱՆ	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գնվածի ՄԱՆ	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<u>7. Հրազդան կիրճի և Երևանյան լճի բարեկարգում</u>		2,000.0	2,000.0	-
				- Կոմունալ ծառայություններ	4213	2,000.0	2,000.0	-
				<u>8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</u>		404,073.1	169,000.0	235,073.1
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	169,000.0	169,000.0	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	30,037.3	-	30,037.3
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	205,035.8	-	205,035.8
